

Երեսնամյա այսպես

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՏՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵՆԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՋԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Ռուսաստանի նորանշանակ դեսպանին

30 հուլիսի




Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինսկին։

առաքելության հաջող իրականացման եւ արդյունավորման համար։

Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ երկու երկրների միջեւ դարերի ընթացքում ձեւավորված ջերմ հարաբերություններին՝ ուրախությամբ արձանագրելով, որ երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում իր կարեւոր ներդրումն ունի նաեւ Հայոց Եկեղեցին։

Զրույցի ընթացքում երկուստեք կարեւորվեց տարբեր բնագավառներում հարաբերությունների առավել սերտացումը, ապա անդրադարձ կատարվեց նաեւ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների եղբայրական հարաբերություններին եւ Ռուսաստանի հայկական համայնքի հոգեւոր կյանքին։

ՎԵՋԱՓՈՒՆ ՏԵՐ



Ի խորոց սրտի շնորհավորելով Ձերդ Սրբության ծննդյան օրը՝ մեր անկեղծ աղոթքն ենք առաքում Տիրոջը, որ Նա իր անպարփակ սիրտ մեջ պահի-պահպանի, երկար կյանք, անսպառ էներգիա ու կորով, ծով համբերություն շնորհի Հայոց Հայրապետիդ։ Աղոթում ենք, որ Տերը Ձեր կյանքի հռովախույզ եւ տրամադ օրերը, Ձեր հոգու ալեկոծումները հանդերձավորի Իր մշտնջենական ու անխառն խաղաղությամբ, պարգևի Ձեզ՝ ապագա գործերում ու ծրագրերում լիալույս ու բերկրառիթ տեսլական, որում շողշողում ու փայլատակում են Տիրոջ Լույսն ու Սերը։

«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրակազմ

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը

Հուլիսի 30-31-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը՝ ընդլայնված կազմով։

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց խորհրդի անդամներին, որ ընդառաջ հրավերին ժամանել են Մայր Աթոռ՝ քննարկելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առջեւ ծառացած գնահատական մարտահրավերները, հայ հավատացելոց կյանքը հուզող խնդիրները։

Ժողովի նիստերն ատենապետեց Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանը։

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ Մայր Աթոռի միջոցառումների վերաբերյալ զեկույց ներկայացրեց հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ Արեւմտյան հայոց թեմի առաջնորդ Հովհանն արք. Տերտերյանը։ Ժողովականներն իրենց գնահատանքը հայտնեցին հանձնախմբին՝ հանձնարարելով շարունակել միջոցառումների ամբողջացման եւ նախապատրաստման աշխատանքները։

Գերագույն հոգեւոր խորհուրդը նաեւ ի գիտություն ընդունեց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանի զեկույցը՝



ցն՝ Թեմական ուղենշային կանոնադրության պահանջներին թեմերի կանոնադրությունների համապատասխանեցման գործընթացի վերաբերյալ։

Տեղեկություններ ներկայացվեցին սեպտեմբերի 21-28-ը Մայր Աթոռում գումարվելիք Հայ Եկեղեցու Ընդհանուր եպիսկոպոսաց ժողովի նախապատրաստական աշխատանքների մասին։

Եկեղեցական ներկայացուցչական ժողովի կանոնադրության նախագծի լրամշակման աշխատանքների մասին զեկույցով հանդես եկավ հանձնախմբի նախագահ, Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ արք. Պետրոսյանը։ ԳՀԿ անդամները գնահատանքով ընդունեցին զեկույցը՝ թելադրելով հանձնախմբին շարունակել կանոնադրության լրամշակման գործընթացը։

Գերագույն հոգեւոր խորհուրդը քննության առավ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Նորվան արք. Չաքարյանի հրաժարական գրությունը, ինչպես եւ Ֆրանսիայի հայոց թեմում դրան առնչված զարգացումների հետ կապված հարցեր։

Քննարկումներից հետո Գերագույն հոգեւոր խորհուրդն ընդունեց Նորվան արք. Չաքարյանի հրաժարականը՝ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդի, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի պաշտոնից եւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամությունից եւ խնդրանք ներկայացրեց Վեհափառ Հայրապետին հաստատելու այն։

Գերագույն հոգեւոր խորհուրդը նաեւ ավստսանք հայտնեց հրաժարականում Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հասցեին ուղղված անհիմն գնահատականների առնչությամբ։ Գերագույն հոգեւոր խորհուրդն իր զորակցությունը հայտնեց Ֆրանսիայի հայոց թեմի թեմական խորհրդին՝ ստեղծված իրավիճակի կարգավորման գործում՝ հորդորելով նաեւ թեմի հավատացյալներին եւ ազգային հաստատություններին ու կազմակերպություններին՝ քրիստոնեական սիրտ ոգով նպաստել Ֆրանսիայի հայոց թեմի բարեկարգությանը եւ շինությանը։

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՐ ԷԶՄԻԱՏՆԻ
ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ


ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐԸ ՄԵՐ ԲՈՒՈՐԻ ՄԱՅՐՆ Է

«Այսուհետև բոլոր սերունդներն ինչ երանի կսան...»

Հիշյալ մարգարեական խոսքերը սուրբ Մարիամն ասաց այն ժամանակ, երբ այցելեց իր բարեկամուհի Եղիսաբեթին՝ Յովհաննես Մկրտչի մորը, ով բավական առաջացած տարիքում հղիացել էր: Եվ երբ Եղիսաբեթը սք Մարիամի ողջույնն առավ, մանուկը ցնծալով խայտաց նրա որովայնում՝ ճանաչելով իր Փրկչին: Եվ այդ ժամ, ինչպես պատմում է ավետարանիչը, Եղիսաբեթն առաջինը համայն մարդկության կողմից ասաց. «Օրհնյալ ես դու կանանց մեջ, եւ օրհնյալ է քո որովայնի պտուղը: Որտեղի՞ց ինձ այս ուրախությունը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մոտ գա. որովհետեւ ահավասիկ երբ քո ողջույնի ձայնը հասավ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովայնում» (Ղուկ. Ա 42-44): Եվ Մարիամն ասաց. «Իմ անձը կփառավորի Տիրոջը, եւ իմ հոգին ցնծաց Իմ Փրկիչ Աստուծով... այսուհետեւ բոլոր սերունդներն ինձ երանի պիտի տան» (Ղուկ. Ա 46-48): Եվ Սրբուհու մարգարեությունն իրականություն դարձավ: Նրա հավատն այնքան կատարյալ գտնվեց, եւ խոնարհությունը՝ գերազանց, որ նա արժանացավ Աստծո Միածին Որդու Մայրը լինելու մեծագույն երանությանը: Աստվածամայրը գերծ էր թե՛ մահացու, թե՛ ներելի մեղքերից, իսկ ադամական մեղքից սրբվեց ավետման պահին: Ստանալով Գաբրիելի հրեշտակապետի ավետիսը՝ նա չընդդիմացավ Աստծու կամքին, այլ խոնարհաբար ասաց. «Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը: Թող քո խոսքի համաձայն լինի ինձ»: Այդ մեծագույն ավետիսով սկսվեց մարդկության փրկագործությունը: Այդ պահից Աստվածամայրն իր մեջ ընդունեց Աստծո Միածին Որդուն՝ դառնալով մարդկային ապականված, շնորհագուրկ բնության նորոգության սկիզբը: Եկեղեցին Կույս Մարիամին Աստվածամայր է անվանում, որովհետեւ նա հղիացավ Սուրբ Հոգուց, եւ Նրանից ծնվեց Ինքն Աստված՝ Հոր Միածին եւ փառակից Որդին՝ միավորված մարդկային բնությանը: Աստվածամայրը լի էր բոլոր առաքինություններով՝ խոնարհություն, համբերություն, Աստծո կամքի համակերպություն... Նա սիրում էր Աստծուն իր ողջ եւրոյամբ: Իր մեծությունը գիտակցելով

հանդերձ՝ նա երբեք չկորցրեց իր խոնարհությունը եւ մինչեւ իր վերափոխումը մնաց Աստծո հնազանդ աղախինը: Նա վառվում էր ողջ մարդկության հանդեպ մեծ սիրով, աղոթում եւ տառապում էր աշխարհի համար: Այդ սիրո շնորհիվ բարեհոգաբար տարավ իր սրտով անցնող սուրը՝ Որդու չարչարանները՝ սգալով առանց ցասման ու Նզովքի, սրտում չկորցնելով պայծառ հավատը Նրա հարության եւ փրկագործության հանդեպ: Աստվածամոր շնորհիվ է, որ կինը վերջապես իր տեղը գտավ մարդկային քաղաքակրթության մեջ, քանզի մինչ քրիստոնեությունը կինը տղամարդուն հավասար անձ չէր համարվում՝ հակառակ իր արժանիքներին, սակայն քրիստոնեությունը բարձրացրեց կնոջը. Աստվածամոր շնորհիվ կինն ազատվեց այն անեծքից ու դատապարտությունից, որին արժանացել էր իր նախամայր Եվայի անհնազանդության ու պատվիրանազանցության պատճառով: Ըստ Աստվածաշունչ Մատյանի՝ երբ Աստված առաջին անգամ խոսեց Եվայի հետ Նրա մեղանչումից հետո, ասաց. «Պիտի անչափ բազմացնեմ քո ցավերը եւ հառաչանքները, ցավերով պիտի երեխաներ ծնես» (տե՛ս Ծննդ. Գ 16): Իսկ Նոր Եվային՝ սք Կույսին, Աստված ուրախություն ու շնորհ ուղարկեց, որովհետեւ մեր նախամոր միջոցով աշխարհի մտավ անեծքը, իսկ սուրբ Մարիամի միջոցով՝ Շնորհն ու Լույսը, Փրկությունն ու Կյանքը՝ Հիսուս Զրիստոսը: Ինչպես ասում է սուրբ Գր. Տաթևացին. «Սք Աստվածածինն իր Միածին Որդու կույս եւ անապական ծննդամբ մեր պատիվն առավել դարձրեց Ադամի եւ հրեշտակների պատվի համեմատ: Զանգի ոչ միայն մեզ տվեց Ադամի փառքը, որ նա ուներ դրախտում, այլեւ այն, ինչ Աստված խոստացավ նրան՝ երկնքի արքայությունը»: Նաեւ՝ **Աստվածորդին ծնվեց այն քարայրում, որտեղ թաղված էին Եվայի նշխարները, որպեսզի Եվան առողջանա Աստվածածնով՝ ազատվելով երկունքի անեծքից**» (Զարոգ Զրիստոսի Ծննդյան մասին): Եվ ահա այդ պատճառով էլ սք Գր. Նարեկացին

իր «Մատյանում» Աստվածամորն անվանում է «Եվայի երկունքի ցավագերծող»...: Այսպիսով՝ քրիստոնեությունը բարձրացրեց կնոջը՝ որպես կենսունակ ուժի. կինն օժտված է նվիրումի, սիրո, հեգության, հնազանդության, քաղցրության շնորհով, եւ քրիստոնեությունը, որ իր եւրոյամբ Սեր է, արժեքավորեց կնոջը՝ «խավարի տաճարից» դարձնելով «Լույսի տաճար»: Եվ այս բոլոր օրհնությունների սկիզբը դրեց սուրբ Կույս Մարիամը՝ լինելով ամենաօրհնյալը բոլոր կանանցից, եւ մարմնավորեց այդ առաքինությունները: Քրիստոսի հավատարիմ հետեւորդների մեջ էլ շատ էին կանայք. կանայք էին Նրա կողքին խաչելության պահին եւ հենց կանայք էլ դարձան հաղթական հարության ավետաբերները... Եկեղեցական պաշտամունքի մեջ Աստվածամայրը ոչ միայն բոլոր սրբերից, այլեւ հրեշտակներից էլ բարձր է դասվում: Քրիստոսից եւ Խաչից հետո Նա ունի ամենաբարձր պատիվը եւ տեղը: Աստվածամայրն ամենամեծ բարեխոսն է համայն աշխարհի համար իր Որդու առջեւ: Նրա բարեխոսությունը հայցելով է սկսվում պատարագի արարողությունը, բազում աղոթքներ անմիջականորեն ուղղված են Նրան՝ որպես Աստվածորդուն ամենամեծ եւ իր գթառատությամբ մեզ ամենից շուտ անսացող սուրբ անձնավորություն: Աստվածամորն են նվիրված բազմաթիվ ներբողներ ու ծավալուն շարականներ: Մեր Եկեղեցին տոնում է սուրբ Կույսի կյանքի բոլոր կարեւոր հանգրվանները՝ հղիությունը, ծնունդը, ընծայումը, ավետումը, ննջումը եւ վերափոխումը: ...Աստվածամայրը հետեւեց իր Որդուն մտորից մինչեւ Գողգոթա: Նա երեսուներեք տարի մնաց Փրկչի հետ: Եվ խաչի վրա Զրիստոսն Իր Մորը հանձնեց Հովհաննես ավետարանչին, որը երկյուղածությամբ սպասավորեց նրան տասներկու տարի: Տիրամայրը, վաթսուս տարի ապրելով մարմնի մեջ, հոգով վերափոխվեց դեպի գերաշխարհայինների կայան՝ իր Արքա Որդու եւ մեր Աստծո արքայություն: Զանգի «ինչպես Տերը քաղցրացրեց մահվան դառնությունը՝ կամավո-



րաբար իբրեւ ուրախարար գինի ճաշակելով այն, այնպես էլ Իր Մորը չխնայեց մահից, այլ Իրեն մահակից ու գերեզմանակից դարձրեց նրան՝ կցորդելով Իր համբարձմանը, դարձնելով հաղորդ Իր հարությանը եւ ժառանգորդ Իր փառքին» (սք Գր. Տաթևացի): Վերափոխվելով երկինք՝ նա անճառելի փառքի եւ անվախճան պատվի մեջ է՝ բարեխոսելու նրանց համար, ովքեր իրեն Աստվածածին են խոստովանում եւ իր Որդուն՝ ճշմարիտ Աստված: Կանանց մեջ օրհնյալ ամենասուրբ Աստվածածինը մեզ հետ է միշտ, իրեն Աստվածածին խոստովանողների հոգում, սրտում եւ շուրթերին:

Սք Աստվածամոր օրհնակելի եւ առաքինի կյանքը դարեր շարունակ համայն մարդկության համար ներշնչանքի անսպառ աղբյուր է հանդիսացել: Նրա հեգությունն ու խոնարհությունը բոլոր ժամանակներում մայրության օրհնակ են եղել, եւ այսօր էլ նա լավագույն օրինակն է հայ կնոջ համար: Մաքուր սրտով եւ անմոլար ընթացքով հայցենք սուրբ Տիրամոր անդառնալի բարեխոսությունը՝ աղաչելով. «Քո առջեւ ենք ընկնում, սուրբ Աստվածածին, եւ աղաչում անարատ Կույսիդ՝ բարեխոսի մեր անձերի համար եւ աղաչիր Միածին Որդուդ՝ փրկել մեզ փորձությունից եւ մեր բոլոր վտանգներից. ամեն»:

Ամե՛լա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆԵՐ ՈՒՒՄ ՈՒՆԵՆԵՐ՝ միշտ դեմոյի Լույս

Դարեր ի վեր ողբացել ենք մեր ճակատագիրը, դժգոհել, որ արժանավայել ապրելու հնարավորություն չենք ունեցել...

Փոփոխելի է ամեն ճակատագիր, եթե կա բարոյական վերափոխում:

Այս հավատամքով առաջնորդվելով եւ աղոթքն ուղեկից դարձրած՝ հուլիսի 29-ին Հրազդանի N 7 միջնակարգ դպրոցի մանկավարժները՝ տնօրեն Հասմիկ Ասատրյանի նախաձեռնությամբ, մեկնեցին հերթական ուխտագնացության:

Այս ուխտագնացությունը պատգամ էր ապագային, թե ինչպես կարելի է կռվել, հայրենիք պաշտպանել, հավատ ներշնչել քեզանից հետո եկողներին: Մարդու կյանքում կարեւորը հողի, հայրենիքի եւ պետության կայունությունն է, որի համար միշտ կլինեն հերոսներ ծնող մայրեր, իրենց կյանքը զոհաբերող հերոսներ:

Այս ուխտագնացությունը դաս էր, որով նոր սերունդը պատմություն է սերտում ու դաստիարակվում այդ պատմությամբ: Այս պատմությունն ար-

ձանագրված է խաչքարերի վրա եւ խաչքարերից մեզ նայող խիզախ նահատակների հայացքներում:

Այս անգամ ուխտավորի մեր ճամփան ուղեկցեց մեզ Արցախ աշխարհ:

Այցելության սկզբնակետը Արցախի հնագույն վանական համալիրներից Դադիվանքն էր: Ծարտարապետական գլուխգործոց Դադի կամ Խուրթ վանքը գտնվում է Մարտակերտի շրջանում՝ Թարթառ գետի ափին: Այստեղ համոզվեցինք, որ հայ ժողովուրդն իր հոգեկան կերտվածքը եւ առեղծվածային կենսունակությունը դարերի խորքից է բերել:

Իրավ է ասված՝ պարտականությունը փետուրի պես թեթեւ է լինում, լեռան չափ՝ ծանր:

Եվ այդ լեռնաչափ պարտականությունն իբրեւ ոգու հայտնություն ուսած՝ շարժվեցինք դեպի Արցախի սիրտը՝ Գանձասար: Գանձասարի Սք Հովհաննես Մկրտիչ Եկեղեցում մանկավարժների վառած մոմերն ու աղոթքներն առ Աստված միայն մեկ աղերս ունեին. երկրի զարգացման



ուղին անշեղ լինի, իսկ բանակը՝ գործել:

Վերադարձը կազմակերպվեց Հուլիսի Սք Դազանչեցոց Եկեղեցի այցելելով: Եկեղեցու պերճախոս լույսերը լցվեց մանկավարժների՝ առ Աստված հնչեցրած ծնրադիր աղոթքով ու իմանալի Լույսի փառաբանությամբ:

Խնդրեցինք Լույս, որովհետեւ կույրի համար բոլոր գույները մեկ են, խնդրեցինք միայն բարություն, քանզի քիչ չարությունն էլ շատ է, խնդրեցինք միտք, բայց առավել՝ անաղարտ հոգի, որովհետեւ միտքը գին չունի, իսկ հոգին՝ սահման, եւ հոգին է մեր նավի ղեկը, մեր արարքների աղը:

Լույսի շքերթի տրամաբանական ավարտը Նորավանքն էր, որտեղ եւս միասնական աղոթք հղեցինք առ Աստված՝ Հայոց աշխարհի հարատեւ խաղաղության, Եկեղեցու շենսցման ու պայծառության համար:

Ողջ ճանապարհին մանկավարժներն ազգային-ազատագրական երգեր էին հնչեցնում հայկական բարձրագագաթ լեռներն ի վեր՝ ապացուցելով, որ քանի դեռ երկնքի եւ երկրի խաչմերուկում որոտում է հայ երգը, ոչ մի պղտոր գետ չի կտրելու մեր՝ ժայռեր պատռող առվի ընթացքը:

Այս ուխտագնացության նպատակն էր Աստծո հետ հաղորդակցվելով՝ միաժամանակ ճանաչել մեր ինքնությունը, հող հայրենին, առավել մոտիկ կանգնել Հայ Առաքելական Սք Եկեղեցուն: Նպատակն իրագործված էր, եւ վստահ կարող ենք ասել՝ մենք մեր դարի շունչն ենք, մենք պատմություն ենք կերտում, որովհետեւ զգում ենք հոգու խորհուրդը, աշխարհի գույները, եւ մենք էլ գունավորվում ենք:

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի Լույս...

Գոհար ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Հրազդանի N 7 միջնակարգ դպրոցի
Հայոց Եկեղեցու պատմության
նախնական

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՄԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Սկիզբը՝ թիվ 7-14

Շիրոթ պահեր ապրեց Նաե Աստուխյան միաբանությունը՝ կաթողիկոս Միքայել Գասպարյանի պատճառով: Սա իր Չմամառի հայրապետանոցը եւ այնտեղ բացված դպրոցը ծաղկեցնելու մտադրությամբ արգելքներ էր ստեղծում Աստուխյանների զարգացման համար եւ կամենում էր տիրել միաբանությանը: Սա նույն բանը կատարեց Լիբանանում, ինչ Մելքոնյանը՝ Վենետիկում: Աստուխյանները հռոմում վանք հիմնելուց հետո կամեցան աշակերտների մի փոքրիկ խումբ փոխադրել հռոմ՝ ուսումնական նպատակներով, սակայն երբ Գասպարյանը դժվարություններ հարու-

ցեց, ստիպված եղան աշակերտներին գաղտագողի տանել հռոմ՝ միաբան Կառապետ Հալաճյանի առաջնորդությամբ: Մեկնողները միայն յոթ ամիս հետո մեծ դժվարությամբ հասան հռոմ՝ երկարատև դադարներ առնելով Մարսելում եւ Լիվոռնոյում: Այս ընթացքում Աստուխյանները մարոնականների միաբանական կանոնագրի փոփոխություններով փորձեցին իրենցը վավերացնել հռոմի պապի կողմից: Պրոպագանդայի ժողովը Գասպարյանին գրում է, որ նա այդ առիթից օգտվի եւ իր գաղափարն առաջ մղի, այն է՝ լուծարել Աստուխյան միաբանությունը եւ հաստատել զմամայան աշակերտություն, որ միաբանություն էր անվանում եւ այդ մասին բացատրություններ ու տեղեկություններ ուղարկում հռոմ: Սակայն դա զարգացում չունեցավ, եւ Աստուխյաններն իրենց դիրքը պահեցին՝ թեպետ առկախ եւ առժամյա ձեռով: Աստուխյանները պետք է սպասեին պրոպագանդայի ժողովի վերջնական որոշմանը: Գասպարյանը 1776 թվին կամեցավ մասնակցել Աստուխյանների ժողովին՝ որպես միաբանության անդամ, սակայն նրանց կողմից դիմադրության հանդիպեց: Գասպարյանը փորձեց ժողովն անվավեր հայտարարել, սակայն հռոմից հեռացավ: Պետիկյան արքեպիսկոպոսը ճշմարտությունը դրա դեմն առան: Գործն այնտեղ հասավ, որ Գասպարյանն իր կյանքի վերջերին՝ 1779 թվին, հաշտություն հաստատեց Աստուխյանների հետ: Սակայն երկկողմանի որոշում այդպես էլ չկայացվեց, որովհետեւ Նա

մահացավ 1780 թվի նոյեմբերի 5-ին եւ թաղվեց Չմամառի կաթողիկոսարանում: Նրան հաջորդեց բերիացի Բարսեղ Ավբարյանը, որը եպիսկոպոս էր ձեռնադրվել Հակոբ Կաթողիկոսի կողմից: Նրա ընտրությունը տեղի ունեցավ 1780 թվի դեկտեմբերի 1-ին, իսկ պապի հաստատումն ստացավ 1781 թվի հունիսի 21-ին:

Հետաքրքրություն է ներկայացնում Գրիգոր Բասմաջյանի պատրիարքությունը Կ. Պոլսում: Նա, անընդհատ գտնվելով ծանր մեղադրանքների ու մշտական հակառակությունների պայմաններում, շարունակում էր պաշտոնավարել, չնայած իրեն համարում էր ակամայից պաշտոնի կոչված: Մի կողմից՝ նրա մտքով անգամ չէր անցնում թողնել պատրիարքությունը, մյուս կողմից՝ նրա հակառակորդները նրան հեռացնելու վերջնական փորձեր չէին կատարում: Եվ ինչ. նա պաշտոնավարեց երկար ու ձիգ ինը տարի, երբ միանգամայն հեշտ էին թվում թե՛ իր կամքով հեռանալը եւ թե՛ ուժով վտարվելը: Նրա հակառակորդների գլուխ էր կանգնել ամիրա Գասպար Մուրադյանը, որն անհասկանալի է, թե ինչու էր թշնամացել նրա դեմ, որովհետեւ Ահազիկի նման խնդիր մեջբերելու հարց չկար: Սակայն Բասմաջյանը, ի դեմս քահանա Մանվել Բալունցու, ձեռք բերեց մի ավելի վտանգավոր հակառակորդի, որը դեռ Նայանի օրոք խառնակություն անելու եւ խժոժությունները ղեկավարելու համար աքսորվել էր: Նա կարճ ժամանակում կարողացել էր փախչել Կիպրոսի աքսորավայրից՝ ծաղկելով մորուքը սափրելով եւ հանդերձանքը փոխելով: Վերադարձել էր Կ. Պոլիս եւ Սիմեոն ամիրայի միջոցով իր աքսորման հրամանը լուծարել էր տվել եւ որոշ դադարից հետո նորից քահանայագործելու արտոնություն էր ստացել: Գասպար Մուրադյանի պահանջով: Նա անգամ սկսել էր պատրիարքարանից շաբաթական աշխատավարձ ստանալ՝ հանգիստ մնալու պայ-



մանով: Նա շուտով գործից դարձավ Գասպարի ձեռքում՝ Բասմաջյանին պաշտոնից քշելու հարցում: Նա իր կողմը գրավեց Աբրահամ Ավնեցուն, որը պատրիարքի ձեռներեց մերձավորներից էր եւ զբաղեցնում էր նրա գործակատարի պաշտոնը, ինչպես նաեւ՝ Սամաթիայի Սբ Գեորգի ծխատերերից Սարգիս Դիպաճյան քահանային, որը վաղուց ի վեր Մանվելի ընկերն էր եղել: Մանվելն անցավ իր խմբակի գլուխ եւ սկսեց գործել Գասպար Մուրադյանի հովանավորությամբ, որին Բասմաջյանը կոչում է ազգի պետ: Մանվելն սկսեց ամեն կերպ վարկաբեկել պատրիարքին 1766 թվից, այսինքն՝ Բասմաջյանի՝ պաշտոնը թողնելուց յոթ տարի առաջ: Բասմաջյանի վրա բարդված մեղադրանքներն անհավատալիության չափ տգեղ էին: Թե իբրեքիտասարդ հասակում հարել է հազարացվոց կրոնին, հետո իսլամությունից հեռացել է դեպի քրիստոնեություն եւ գնացել է Երուսաղեմ, թափառել է այլեւայլ վայրերում ու անցյալը մոռացնելու համար հոգեւորական է դարձել՝ հասնելով պատրիարքության:

Շարունակությունը՝ էջ 4

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ «ԿՏՐԻՃՎՈՐԱՅ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ» ԻԲՐԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սկիզբը՝ թիվ 12-14

Հայտնի է, որ 1283 թվականի Հայտնության տոնի առթիվ մեծ հանդիսություններ էին կատարվել Կիլիկյան արքունիքում, որոնց ժամանակ Լեւոն Գ թագավորն ասպետական օրհնություն էր տվել իր որդիներին եւ այլ երիտասարդների՝ «մանկացն իշխանաց եւ յարքունական սպասաւորացն» (տե՛ս նույն տեղում, էջ 44):

Այնպես Նշում է, որ այդ հանդիսություններին մասնակցել է նաեւ Հովհաննես Երզնկացին եւ մի ընդարձակ ճառ արտասանել, որտեղ ակնարկվում էր «ընդ եկեղեցւոյ» գտնվող ինչ-որ զինվորական միությունների մասին:

Է. Բաղդասարյանն այն համոզմունքն է հայտնում, որ Կիլիկիայում ստեղծված այդ կազմակերպությունները որեւէ կապ չունեին եվրոպական ասպետական կառույցների հետ: Նա նշում է՝ Հովհաննես Երզնկացու ճառում «Խոսքը ոչ թե եվրոպական օրինակով ասպետական կազմակերպություն ստեղծելու մասին է, որը բազմաթիվ պատճառներով անիրագործելի եւ անպատեհ էր Կիլիկյան հայկական թագավորությունում, այլ խորապես մտածված քաղաքականություն, երբ չափազանց անպաստ՝ միջազգային մեկուսացման պայմաններում, պետությունը ձգտում էր համախմբելու ոչ միայն թագավորության, այլեւ հայկական ցար ու ցրիվ մյուս ռազմական ուժերը, համաժողովրդական աղետին ընդդիմանալու համար» (նույն տեղում, էջ 55):

Կարծում ենք՝ հիշատակված զինվորական միավորումները «Կտրիճվորաց» եղբայրություններ են եղել, ունեցել են ասպետական հանդերձանք, սակայն Երզնկայի «Եղբայրության» նման հետապնդել են ազգային շահեր՝ դիմագրավելով «բռնաւորաց» եւ «չար մարդկանց», պաշտպան կանգնելով հարազատ երկրին:



Վերը նշվեց, որ Հովհաննես Երզնկացին 1283 թ. Կիլիկիայում ճառ էր արտասանել եւ ինչպէս ինչ-որ զինվորական կազմակերպությունների: Դրանից երեք տարի առաջ նա Երզնկայի «Եղբայրության» համար գրել էր կանոններ եւ մտերմացել նրա անդամներին, ուստի ճիշտ կլինի կրած, որ Երզնկացին հենց «Եղբայրությունների» մասին էր վկայել իր ճառում:

Հայ միջնադարյան քաղաքներում կազմակերպված «Եղբայրությունների» քաղաքական ու տնտեսական նպատակները, ստեղծման հանգամանքները ճիշտ պատկերացնելու համար անհրաժեշտ է դրանք համեմատել այլ երկրներում եղած նմանատիպ կազմակերպությունների հետ:

Երզնկայի «Եղբայր միաբանութեան» նման կազմակերպություններ գոյություն են ունեցել արաբական քաղաքներում դեռեւս խալիֆայության շրջանում (տե՛ս Սեդա Պարսումեան-Տաոյեան, Հայ-արաբական մշակութային յարաբերութեանց պատմութենէն, ԺԳ դար, Պէտրոս, 1991, էջ 22-46):

Ըստ 10-11-րդ դարերի արաբական աղբյուրների՝ Միջագետքի հարավում գտնվող Պասրա քաղաքում մի խումբ մտավորականներ (10-րդ դարում) ստեղծել են մի կազմակերպություն՝ «Մաքրության Եղբայրություն» անվամբ, դրա համար գրել են «Թղթեր», որ հայտնի են «Հանրագիտարանային թղթեր» կամ «Ռասա էլ»։ «Թղթերից» պարզ է դառնում, որ «Եղբայրությունը» Երզնկայի «Եղբայր միաբանութեան» նման ունեցել է կրտսեր եւ ավագ անդամներ, որոնք ենթարկվել են իրենց ղեկավար «Եղբայրներին», այսինքն՝ մանկապալաններին (Երզնկացու արտահայտությամբ) (տե՛ս նույն տեղում, էջ 56):

«Մաքրության Եղբայրության» անդամները տասներկու օրը մեկ հավաքվում էին եւ բավարարում իրենց հոգեկան ու մարմնավոր պահանջները (հավանաբար նրանք էլ հայ «մանկոտների» նման խրախճանքներ էին կազմակերպել, գինի մսել եւ ունկնդրել բանաստեղծ-գուսանների երգերը):

Հետաքրքիր է իմանալ, որ այս կազմակերպությունն իր անունը վերցրել է հնդկ իմաստուն Պիտեայի առակագրից, որտեղ «Թակարդված աղավկին» առակում է «Եղբայր» բառն առաջին անգամ գործածվել: «Հանրագիտարանային թղթերում» այս առակին անդրադառնում են հետեւյալ կերպ. «Իմացիր եղբայր, թե անկարող ես առանձին ազատիլ այս աշխարհի փորձանքներէն... ազատագրութեանդ համար պետք ունիս եղբայրներու յորդորներուն ու օգնութեան... Յիշէ «Թակարդը ինկած Աղանին» առակը, յիշէ, թե աղանին ինչպես յաջողեցաւ ազատիլ որսորդին թակարդէն...» (նույն տեղում, էջ 52):

«Մաքրության Եղբայրության» նպատակն այն էր, որ մարդը երջանիկ լինի: Սակայն արասյան խալիֆայության շրջանում մարդու մեջ խաթարվել էր երջանկությունը: Եվ դրա պատճառը, ըստ «Եղբայրության», կրոնների եւ ազգությունների մեծ թիվն էր, իսկ լուծումը միակրոնության մեջ էր:

Հայտնի է, որ ողջ խալիֆայության տարածքում, սկսած 8-րդ դարից, ի հայտ են եկել երիտասարդական շարժումներ, որոնք իսլամական պատմության մեջ կոչվել են «Ֆրթուէական» շարժումներ: «Ֆրթուէ» կամ «Ֆաթա» արաբերեն բառերը նույն իմաստն ունեն, այն է՝ երիտասարդ տղամարդ, եւ որոնք համարժեք են Հովհաննես Երզնկացու գործածած «մանկոտ-մանուկ» բառին: «Ֆրթուէները» կամ ֆիտաները եղել են առեւտրականներ ու արհեստավորների զինյալ պաշտպաններ: Նրանց դերը մեծացել է այն ժամանակ, երբ խալիֆվել են պետության հիմքերը: 12-րդ դարում ապրած Ալ-Նասեր խալիֆան «Ֆրթուէական» կազմակերպություններն օգտագործել էր խալիֆայական իշխանության ամրապնդման համար: Նույն դարում, ըստ արաբական աղբյուրների, Բաղդադում եղել է հինգ «Ֆրթուէական» միություն, որոնց կանոնադրությունը հիշեցնում է Երզնկայի «Եղբայրությունը»: «Ֆրթուէները» ունեին իրենց հատուկ տարազը եւ օրենքները: Նրանք միության անդամ դառնում էին գոտի ստանալու արարողությունից հետո:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԱՐՁԱԿ

Մասնակի կրճատումներով

Սկիզբը՝ թիվ 11-14

Ժամանակակից բանահավաքների կյանքին է նվիրված հալափյանի «Մեռնող հառնող» վեպը: Գլխավոր հերոսները՝ Տավրոսը, Տիրայրը, Աստղիկը, Մաժանը, շրջում են գյուղերում եւ հավաքում ժողովրդական ստեղծագործության նշխարներ: Հեղինակի հիմնական աստիճանը վերաբերում է սերունդների հոգեւոր կապին, մշակութային նվաճումների ժառանգորդականությանը՝ սկսած հեթանոսությունից (վեպում Անահիտ աստվածուհու հետ կապված դրվագը) եւ վերջացրած նորագույն ժամանակներով: Հերոսներին ներքաշելով բանահյուսության ոլորտը՝ հեղինակն առասպելաբանական տարրեր է ներմուծել նաեւ վիպական հյուսվածքի մեջ: Վեպի առաջին մասում Տավրոսի բանահավաքական գործունեությունը դուրս է ժամանակային եւ տարածական որոշակիությունից: Միաժամանակ, վիպական գործողություններն առաջ են շարժվում ոչ թե դեպքերի հաջորդականությամբ, այլ առանձին պատմությունների. կարծես հեղինակն ինքն է դառնում մի նոր ասացող: Բայց եւ այս վերջին հնարքը մասնակի դրվագայնություն է հաղորդում գործին եւ թուլացնում առանձին հատվածների ներքին պատճառական կապը:

Ժամանակակից հայ արձակուրդում ուրույն տեղ ունի **պայմանական իրավիճակների** մեջ ներքաշված մարդկային հոգեվիճակների ուսումնասիրությունը:

«Կլոդ Ռոբերտ Իգերլի» (1968) եւ «Ամենատխուր մարդը» (1975) վիպակներում **Պ. Չեթունցյան** անդրադառնում է 20-րդ դարի երկու հատկանշական դիպվածների՝ փաստական հիմքի վրա ստեղծելով մեր հայրենամյակի ծանր ողբերգությունների գեղարվեստական պատկերը:

Առաջին վիպակում պատկերված է դարի մեծագույն ոճիրը՝ ատոմային ռումբի նետում Հիդրոսի մայի վրա, 200 000 զոհ, ճառագայթային հիվանդություն եւ ոճիրը գիտակցելու ու զոչալու ահավոր ճիգ: Մյուսում՝ կետայրյա ժամկետով բանտարկություն եւ, թվում է, թե վերջնականապես տանուլ տված կյանքի վերստին ազատագրում, որի նախադրյալը հոգու մաքրությունն է ու ստեղծագործ միտքը:

«Կլոդ Ռոբերտ Իգերլի» վիպակում կարեւոր հարցադրումներից մեկն ինքնագիտակցության գալու եւ կատարած հանցանքից հետո սեփական անձի հոգեվերլուծական դատավարություն կատարելու գիտակցությունն է: Կլոդն սկսում է գիտակցել, որ հանցանքը կատարելու ժամանակ ինքը եղել է ռազմական հզոր մեքենայի պտուտակ: Հանցանքից հետո նա մեքենայի մասից, առաջադրանք կատարող պտուտակից փորձում է դառնալ իր անհատական մտածողությունն ու զգացողությունն ունեցող մարդ, եւ հենց այդ պահին էլ հանրությունն իր «հերոսին» որակում է որպես հոգեկան հիվանդ եւ մեկուսացնում իրենից: Մեղքի գիտակցումից հետո Կլոդը, կարծես, դառնում է Հիդրոսի մայի զոհերից մեկը: Նրան իր իսկ կատարած հանցանքի զոհ են համարում թե՛ վիեննացի փիլի-

սոփա Գյունտեր Անդերսը եւ թե՛ ճառագայթային ախտով հիվանդ 30 ճապոնացի աղջիկներ:

Չեթունցյանն ստեղծում է երկու ներհակ կացություն, որի կրողներն են Իգերլին եւ վեպի պայմանական կառուցվածքի մեջ իր տեղն ունեցող Նապոլեոն Բոնապարտը՝ մեղքը գիտակցող պտուտակ-անհատը եւ ոճիրը նախապատրաստող ուժը: Մարդուն մեքենայի՝ անգիտակից կատարողի վերածելու պահանջ եւ կատարող մեքենա դարձած մարդու վերստին մարդկայնացում: Այս երկու հզոր ուժերի հակադրությունն էլ ստեղծում է 20-րդ դարի բարոյական բնույթի բախումներից մեկը: Վիպակի հերոսները ոչ այնքան կերպար դառնալու, որքան խորհրդանշանի վերածվելու նկարագիր ունեն, ինչին զգալիորեն օգնում է վեպի կառուցվածքային պայմանականությունը: Ընդհանրապես Չեթունցյանի գրելաձեւին հատկանշական է իրականի հենքի վրա ձեւավորվող պայմանական ու մասամբ երեւակայական պատկերամտածողությունը:

Պայմանական միջոցների օգտագործմամբ է գրված նաեւ «Ամենատխուր մարդը» վիպակը: Սիրած աղջկան անպատվությունից փրկելու համար Ստրաուզը դառնում է ակամա մարդասպան: Նրան դատապարտում են մահապատժի, ապա այն փոխում ցմահ բանտարկության: Քանի որ նա իրեն հանցագործ չի համարում եւ չունի մեղքի գիտակցություն, ուստի տրվում է ստեղծագործական աշխատանքի, բանտային պայմաններում դառնում միջազգային համբավ վայելող թռչնաբան եւ այդպես նվաճում իր ազատությունը:



Ստեղծվում է յուրահատուկ իրադրություն. ազատություն՝ բանտային պայմաններում եւ ազատագրություն՝ ազատության մեջ: Իրենց սոցիալական դրությամբ տարբեր են նաեւ այս վիճակները կրողները, որոնք են Ստրաուզը եւ երկրի թագավորը: Երկու հակադիր վիճակներն ստեղծում են նաեւ հակադիր կերպարներ: Այդ հակադրությունն առկա է նաեւ Նրանց կյանքի մանրամասների մեջ: Նրանք հասակակիցներ են, նույն օրն է որոշվել նրանց ճակատագիրը. մեկը դարձել է թագավոր, մյուսը՝ կալանավոր: Ստեղծվում են անսահման հնարավորություններ ունեցող, սակայն իր հնարավորությունների եւ ազատության մեջ սահմանափակված, իր ստեղծած օրենքներին գերի թագավորի եւ իր շղթաների մեջ հոգու ու մտքի ազատությամբ նաեւ իր ապրելու ազատությունը նվաճած բանտարկային կերպար-խորհրդանշաններ:

Վիպակի վերջում հեղինակը երկատում է արդեն ազատության մեջ գտնվող Ստրաուզի կենսագրությունը եւ դեմ դիմաց կանգնեցնում դեռեւս չդատապարտված եւ ապա բանտարկյալի վիճակում հայտնված Ստրաուզին: Իրենց վիճակով եւ տա-

րիքով տարբեր բեւեմներում գտնվող երկու Ստրաուզներից առաջինն ընդունում է երկրորդի հաղթանակը, որովհետեւ մեկն ազատ էր, իսկ մյուսը նվաճել էր ազատությունը:

Պայմանական իրավիճակների մեջ են գործում նաեւ **Վ. Պողոսյանի** «Երկնային պատիժ» (1983) վիպակի հերոսները:

Այս տեսակետից ուշագրավ են նաեւ հեքիաթ-վեպի ժանրով գրված **Մ. Սարգսյանի** «Զաչ Նազար» (1980) եւ **Ժ. Ավետիսյանի** «Սիմոն որդի Սիմոնի» (հ. 1, 1984, հ. 2, 1987) երկերը, որոնցում ժամանակակից կյանքն իր բարբերով վերափոխված ձեւով արտացոլվում է արդեն ավանդական դարձած քաջնազարականության նյութով, երբ խեղճ ու վախկոտ մարդիկ դառնում են երկրի տեր ու տիրակալն եւ ըստ իրենց հայեցողության՝ տնօրինում ժողովրդի բախտը:

Պայմանական իրավիճակների ստեղծումը բնորոշ է նաեւ **Ա. Այվազյանի** «Ընտանիքի հայրը» (1968), «Փառահամար» (1973), «Սիկոր Մարտիրոսի արկածները» (1977), «Շռանկյունի» (1983), «Դիպլոմատ» (1985) ժողովածուներում զետեղված վիպակներին, պատմվածքներին ու նորավեպերին:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՄԿՈՍՆԵՐ


ՄԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Սկիզբը՝ էջ 3

Թե իբր նա թվապատված է, եւ դա հավաստել է նրանցից մեկը, այսինքն՝ Մանվելը կամ Աբրահամը: Թե 800 քսակ գումար տալով Սարգիս Սարաֆյան եւ Սամվել Երզնկացի եպիսկոպոսներին՝ ուղարկել է Արեւմուտք, որ դպրատուն բացեն, եւ աշակերտներ է ուղարկել՝ լատինական գիտությունների մեջ խորանալու: Թե Նալյա-նից երկու երկաթյա արկղ է մնացել՝ ոսկով լեցուն, որոնք արքունիքին պետք է հանձնվեին՝ որպես տուրք, սակայն ինքը դրանք բացել է եւ չի կատարել պահանջը: Թե որդ ազգը հնազանդեցրել է պապին եւ համարձակորդն գնում է լատինների եկեղեցին: Թե հրամայել է աղոթել քրիստոնյաների հաղթանակի եւ լատինների պայծառ հավատի համար: Թե հայ իսլամացածներին փախցրել է Արեւմուտք եւ ներելով նրանց՝ ասել է, որ այնտեղ պահեն տեղի հավատն ու քրիստոնեությունը: Թե թույլ է տվել եկեղեցիները դարձնել մզկիթներ: Բասմաշյանը, թվարկելով այս մեղադրանքները, դրանք զրպարտություն է համարում եւ հերքում դրանք: Բասմաշյանի հակառակորդներն այդ բամբասանքը հասցրին իշխանություններին եւ անգամ սուլթանին եւ պարանը պատեցնելով՝ հայտարարում էին, թե երբ պատրիարքին իսլամացնեն, նրան պետք է այդ պարանով կախել: Ավելորդ է ասել, թե ինչ լրբություններ էին գործում Բասմաշյանի հակառակորդները, եւ անընթացել է, թե նա ինչպես էր կարողա-

նում մնալ իր պաշտոնում: Պատճառը, անշուշտ, այն էր, որ հանրությունը չէր համակրել բամբաստողների այդ խմբակին: Երբ ընտրություններից ութ տարի հետո Բասմաշյանը փորձեց պատրիարքությունից հեռանալ, ժողովուրդը հաղետ եկավ նրա պաշտպանությանը: 1772 թվի փետրվարի 22-ին ժողով հրավիրեցին, որին մասնակցում էին Կ. Պոլսի վեց թաղերի բնակիչներ, քահանաներ ու իշխաններ՝ ավելի քան հազար մարդ, որտեղ Բասմաշյանը հայտարարեց իր հրաժարականի մասին, սակայն ժողովը դրան չհամաձայնեց եւ սպառնաց այդ զրպարտանքների դեմ բողոքել մինչեւ արքունիք: Դա հավաստվեց հատուկ գրությամբ, որը կնքել էր երկու հարյուր մարդ: Բասմաշյանը դրանից քաջալերվեց եւ մնաց իր պաշտոնին: Սակայն նրան տրված վստահությունը գործնական չեղավ, եւ նա կրկին հարձակումների ենթարկվեց իր հակառակորդների կողմից: Եկեղեցիներում նրա դեմ սպառնալից գրություններ տարածվեցին: Բասմաշյանը Մանվելի համախոհներից մեկին բանտարկել եւ անգամ Մանվելին ու Աբրահամին Ամասիա աքսորել տվեց: Սակայն հակառակությունը չվերացավ, քանի որ ակտիվորեն գործում էր Գասպար ամիրան:

Գասպարը, Բասմաշյանին հունից հանելու համար, Երուսաղեմի հաշիվները մեջտեղ բերեց, թե նա ութ հազար դուրուշ պարտք է, քանի որ Երուսաղեմի հաշիվից ծախսել է իր ընտրության առթիվ: Սակայն



դա ընդհանուր է պաշտոնական ծախս էր ոչ թե՛ անձնական: Գասպարի ճնշմամբ Բասմաշյանը Երուսաղեմի պատրիարք Կարապետի անունով պարտագիր ստորագրեց, չնայած նա մահացել էր: Բասմաշյանը մուրհակը գրելիս մանկամտություն հանդես բերեց: Նա դա արեց պատրիարքությունը պահելու հեռանկարով: Նա պարտքը վճարելու հնարավորություն չուներ, բայց Գասպարը եւ մյուս ամիրանները հորդորեցին, թե Աստված ողորմած է, միայն թե այժմ նա պարտքը հանձն առնի: Նա հույս ուներ, որ այդ պարտքն իր վրա չի ծանրանա, սակայն 1773 թվին՝ ընտրությունից ինը տարի հետո, նրա հակառակորդները միանգամայն անբարեհաճ դիրք գրավեցին: Բասմաշյանը փորձում էր ցույց տալ, որ նման ծախսեր եղել են իր նախորդների օրոք էլ, բայց դրանք անձնական պարտք չեն համարվել, այլ եղել են Երուսաղեմի հաշիվին: Սակայն գործի քննության ժամանակ ձայն անգամ չհանեց՝ վախենալով կորցնել աթոռը:

Ժողովրդական ցույցեր եղան՝ ի պաշտպանություն Բասմաշյանի, մերժվեց նրա հրաժարանը, սակայն դա արդյունք չունեցավ, եւ Բասմաշյանը գնալով տկարացավ: Նա, տեսնելով իրերի այդ ընթացքը, որոշեց հեռանալ պատրիարքությունից: Նախքան հեռանալը՝ նա բանակցեց մեծամեծների հետ՝ խնդրելով իրեն մոտակա վայրում բնակության տեղ տալ՝ բավականին ապրուստով, որին մեծամեծները համաձայնեցին: Խորհրդակցություններ եղան, մի ամբողջ ամիս անցավ, մինչեւ որ ընտրությունը կանգ առավ Էջմիածնի նվիրակ Չաքարիա Եպիսկոպոսի վրա: Մեկի հրաժարականի եւ մյուսի հաստատման պաշտոնագրերը ներկայացվեցին իշխանություններին: Բասմաշյանը 1773 թվի նոյեմբերի 28-ին թողեց պատրիարքությունը եւ բնակվեց Սյուլտարի երուսաղեմատանը: Նա այստեղ ապրեց տասն ամիս: Մեծամեծներն իրենց խոստումը չհարգեցին եւ սկսեցին գործել նրա դեմ: Նրա կողմնակիցները եւ հատկապես հռոմեաւեները հանդես եկան Չաքարիայի դեմ, որից հետո մեծամեծները նրան հորդորեցին հեռանալ: Նա համաձայնեց գնալ Կիպրոս՝ որպես առաջնորդ: Տեղ հասավ 1774 թվի հոկտեմբերի 26-ին եւ այստեղ մնաց տասն ամիս: Սակայն ավելի մեծ ձգտումներ ու ախորժակ ուներ: Նա որոշում է դիմել Արեւմուտք, չնայած նոր հակառակություններ չէին եղել: Էջմիածնի չդիմեց եւ գոնե իր փափագած եպիսկոպոսությունն ստանալ չփորձեց: 1775 թվի սեպտեմբերին նա մեկնեց Վենետիկ եւ տեղ հասավ դեկտեմբերին: Վենետիկում մնաց հինգ ամիս, 1776 թվի ամռան անցավ Զոմ, իսկ ինն ամիս անց՝ 1777 թվի ապրիլին տեղափոխվեց Անկոնա: Նա նպատակ ուներ հաստատվել մի ծովափնյա վայրում:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

73 ԳՍԱ թղթակից անդամ, պրոֆեսոր



Սահակ Պարթև կաթողիկոսի մահվան յոթերորդ տարեկիցի առթիվ («Եղեալ միաբանութեամբ աւագ Յայոց, յեւթներորդ ամի վախճանելոյն սրբոյն Սահակայ կարգեցան կանոնքս այս» - (Կանոնագիրք Յայոց, հտ. Ա, Աշխատասիրութեամբ՝ Վազգեն Յակոբյանի, Երեւան, 1964, էջ 4239) Ղ. Ալիշանի ունեցած ձեռագրում ասված է. «Սահմանք եւ Կանոնք, եղեալ միաբանութեամբ աւագ Յայոց. ի հինգերորդ ամի վախճանելոյն Սահակայ կարգեցաւ Կանոնս», որի համար Ղ. Ալիշանը ժողովը դնում է 443 թվին (Ղ. Ալիշան, Յայտապատում, Վենետիկ, 1901, էջ 159, ծան. 1): Ըստ իս՝ նման մի նշանակալից ժողով կարող էր հրավիրվել եկեղեցական տեսակետից ավելի խորհրդանշական թվի՝ մահվան յոթերորդ տարեկիցի առթիվ՝ 444 կամ 445 թվին (Պարսից արքայից արքա Յազկերտ Բ-ի գահակալության առաջին տարին եվրոպացի պատմաբանները հաշվում են 438 թ. կամ

439 թ.: Եվ քանի որ Կորյունը Սահակի վախճանը դնում է Յազկերտ Բ-ի առաջին տարվա Նավասարդ ամսի 30-ին, ուստի նրա վախճանը պետք է տեղի ունենար 438 թվի կամ 439-ի Նավասարդի 30-ին: Ըստ այսմ էլ Շահապիվանի ժողովը, որը գումարվել է Սահակ Պարթևի մահվան 7-րդ տարեկիցի առթիվ՝ Յազկերտի թագավորության 2 տարում, կարող էր տեղի ունենալ 444 կամ 445 թվի տարեկգրին՝ Նավասարդի Ամանորաբեր տոնին): Նավասարդ ամսի սկզբին, Նոր տարվա նորաբեր տոնին՝ Վասակ Սյունու մարգապետության, Վահան Ամատունու հազարապետության եւ Կրիվ Խոռխոռունու մարդագության ժամանակ, Շահապիվանում՝ Յայոց թագավորների բանակատեղում (ի բանակետղ թագաւորացն Յայոց) (Տէ՛ս Կանոնագիրք Յայոց, հտ.Ա, էջ 427): Մ. Չամչյանը Շահապիվանը մեկ նույնացնում է Բագրեւանդի գավառի Բագավան

ՈՎԲԵՐ ԵՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԱԽԱՆՁԱՐՈՒՅՑ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ (ՇԱՀԱՊԻՎԱՆԻ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՐԻՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁ)

ավանի հետ, իսկ մի քանի տող հետո այն տեղադրում Բագավանի մեծակայքում. «Ի գալ ժողովիլ բազմութեան ի յաւանն Բագուան ի գաւառն Բագրեւանդայ, (Յովսէփ կաթողիկոս) արար ժողով եպիսկոպոսաց եւ վարդապետաց եւ վանականաց, երիցանց եւ սարկաւազաց ի Շահապիվան, որ մերձ էր ի բագուան՝ ի սահմանակից գաւառն Ծաղկոտան, որ եւ էր տեղի բնակութեան սպարապետին հայոց, եւ իմբի բանակի նորա» - (Մ. Չամչյան, Յայոց պատմություն, հատոր Բ, Երեւան, 1984, էջ 15-16) հրավիրվեց հայ հոգեւոր դասի, նախարարների եւ այլ աշխարհականների ժողով: Թեեւ Յովհան Իմաստասեր Օձնեցու «Սակս ժողովոց» կանոնական ժողովածուում, բացի հիշյալ պետական այրերից, անուն առ անուն չեն հիշատակված Շահապիվանի ժողովի մասնակից հոգեւոր եւ աշխարհիկ անձինք, բայց այլ ձեռագրեր ունեն «Նախադրութիւն» վերնագրով մի միջանկյալ հատված, որի մեջ հանվան հիշատակված են մի շարք գլխավոր եպիսկոպոսներ, գլխավոր երեցներ եւ ավագ նախարարներ: Շահապիվանի ժողովի «Նախադրութիւն»-ը, որքան ինձ հայտնի է, առաջինը հրատարակել է Աբել արք. Մխիթարյանը 1874 թվին (Աբել Մխիթարյան, Պատմութիւն ժողովոց Յայտապատում Եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբ ի

պետս ժառանգաւորաց, ի Վաղարշապատ, 1874, էջ 57-60), այնուհետեւ Ղ. Ալիշանը երկու անգամ՝ «Այրարատ» (1890 թ.) եւ «Յայտապատում» (1901 թ.) սովորածավալ երկասիրություններում (Ղ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 519. Յայտապատում, էջ 159-160): Դենց ժողովի ընդարձակ արձանագրությունն աչքի առաջ ունենալով Մ. Օրմանյանը մատնանշում է. «Մեր օրինակին մէջ յատուկ անուններ չեն յիշուած, այլ ուրիշ օրինակներ կը յիշեն, եպիսկոպոսներն Դազար, Տաճատ, Արտակ, Գագ եւ Եփրեմ, երեցներն Յովսէփ, Յովնան, Մեղիտոս, Երեմիա, Ասպուրակէս, Դանիէլ, Դեռնոյ սուրբն եւ Եղիշէ դրան երեց: Իսկ նախարարներն Վասակէ, Վահանէ, Վրիւ գատ, օրինակի մէջ յիշուած են նաեւ Վարդան Մամիկոնեան, Արշաւիր Կամսարական, Մանաճիիր Ռշտունի սպարապետ, եւ Զիկ Դիմաքսեան» (Մ. Օրմանյան, Ազգապատում, հտ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 379): Մանրամասն անդրադառնալով Շահապիվանի ժողովի ընդունած կանոնների բնույթին՝ Ն. Ալիշանն արձանագրության ձեռագրերը նույնպիսի բժախնությունամբ բաժանում է չորս ընդարձակ խմբագրության եւ իբրեւ հինգերորդ խմբագրություն՝ դրանցից առանձնացնում վերոհիշյալ «Նախադրութիւնը», որը

բացակայում է նրա նշած չորս խմբագրություններում, եւ որի մեջ էլ իրենց անձնանուններով նշված են ժողովի մասնակից հինգ գլխավոր եպիսկոպոս, ութ գլխավոր երեց, չորս ավագ նախարար (Ն. Ալիշան, Շահապիվանի ժողովին կանոնները, մատենագրական ուսումնասիրութիւն առթիւ 1500ամեաց տարեդարձին (444-1944) - Հանդէս Ամսօրեայ, 1949, թիւ 4-12, էջ 86, 90): Ալիսիայտ Է, որ Օրմանյանի եւ Ալիսիանի ձեռքի տակ եղել են արձանագրության նույն այն ընդարձակ շարադրանքը եւ «Նախադրութիւն» կոչվածը, որոնք գտնուելով են Վազգեն Յակոբյանի հրատարակած Յայոց Կանոնագրի երկատորոյակում (Կանոնագիրք Յայոց, հտ. Ա, էջ 424-429 եւ ծանոթագրություններ՝ էջ 627-629): Իր ամփոփած այս տվյալներով, հիշյալ «Նախադրութիւն»-ը, իմ կարծիքով, առավել հետաքրքիր վավերագիր է, քան Շահապիվանի ժողովին վերաբերող մյուս՝ թելուգել ավելի ընդարձակ արձանագրությունները: Ուստի եւ ստորեւ կանդրադառնամ բացառապէս «Նախադրութեան» բնույթին եւ պատմական արժեքին, չնայած մինչեւ այժմ այդ վավերագրի վավերականության մասին անհամեմատ ավելի շատ ժխտական կարծիքներ են ինչել, քան՝ դրական: Շարունակությունը՝ էջ 8

ԱԹ-Թ-ԱՆԱՀԻ

Սկիզբը՝ թիվ 9-12, 14

ԱԹԻ-Լ-ՆՈՒՍԱՅԻ ՊԱՏՄԱԾԸ

Աթու-Լ-Յուսայն իբն Այյաշն ինձ պատմեց շեյխից (որի անունը մոռացել եմ) լսածը. «Աթու Աթալլահ իբն Աբի Աուֆն ինձ հայտնեց, որ Ուբայ-դալլահ իբն Սուլայմանը թաքնվում էր իր տանը: «Մի անգամ,- ասաց նա,- այցելեցի նրան իմ տան այն սենյակում, որ տրամադրել էի իրեն: Նա ոտքի ելավ ինձ ողջունելու, իսկ ես առանց մտածելու կատակեցի. «Տե՛ր, դա պահիր մինչ այն ժամանակը, երբ այդպիսի վերաբերմունքն ինձ օգտակար կլինի»»: Ընդամենը մի քանի օր անց նրան վեզիր նշանակեցին: Այնժամ իմ տնեցիներն ասացին, որ անհրաժեշտ է իմ այցը նրան: Բայց այդ խորհրդին չհետևեցի, թեպետ այն ժամանակ աննախանձելի վիճակում էի: «Ինձ ուրեւ վտանգ չի սպառնում,- ասացի ես,- ու եթե ես այսպիսի ժամանակ գնամ նրա մոտ, նրան կթվա, թե ես նրան ցուցաբերած բարության դիմաց հատուցում եմ պահանջում: Ես չեմ կարող այդ անել, իսկ եթե նա ուզում է ինձ ինչ-որ բանով օգնել, ինքը կանի առաջին քայլը»:

Գիշերը խոկմունքով անցկացրի. դա հենց այն օրվան նախորդն էր, երբ սովորաբար պարգեւաբաշխում է լինում: Առաջինը ինձ ներկայացավ նվիրակը, որ բերում էր վեզիրի նամակը. այնտեղ նա կշտամբում էր ինձ, թե ուշանում եմ իր մոտ հայտնվել, եւ հրավիրում էր ինձ:

Գնացի եւ նրան գտա շատ մարդկանցով շրջապատված: Երբ մոտեցա նրան, ինձ ընդառաջ ելավ ամբողջ հասակով եւ ինձ գրկելով՝ ակննչիս շնչեց. «Եկել է ժամանակը, երբ կարող եմ քեզ պատվել ոտքի ելնելով՝ օգտավետ քեզ համար»: Ապա նա նստեց եւ ինձ առաջարկեց նստել իր կողքին՝ բարձր գահավորակին: Ես համբուրեցի նրա ձեռքը՝ զուգակցելով շնորհավորանքներով ու մաղթանքներով: Որոշ ժամանակ անց նրան կանչեցին ալ-Մուլադիդի մոտ: Նա վեր ելավ, բայց ինձ հորդորեց մնալ տեղում: Զանի որ շարունակում էի նստած մնալ գահավորակին, բոլոր աչքերը հառվեցին վրաս, եւ մարդիկ սկսեցին ինձ հետ վարվել ամենահարգալից կերպով եւ մեծ պատվով: Ընտով Ուբայդալլահը վերադարձավ ծայտալով: Նա թեւս ընկավ ու տարավ ներսի սենյակները, ուր ասաց. «Գիտե՛ս արդյոք, որ խալիֆն ինձ կանչել էր քո կապակցությամբ: Նա գրավոր հաղորդում էր ստացել, որ ես քեզ վեզիրի ընդունարանում ողջունել եմ կանգնած: Ուստի նա ինձ կանչել էր, որ հաշիվ տամ դրա համար: «Դու ինչո՞ւ ես նսեմացնում վեզիրի ընդունարանը,- ասաց նա,- ոտքի ելնելով վաճառականի առջեւ: -Եթե նա լիներ ուրեւ նահանգի կառավարիչ, դարձյալ դա անօրինական կլիներ, եթե նույնիսկ նա գահաժառանգ լիներ, դա եւս չափազանց մեծ պատիվ կլիներ»: Եվ նա այս ոգով շարունակեց:

Այնժամ ես ասացի. «Ուղղափառների՝ առաջնորդ, ես բնավ չեմ մոռացել վեզիրի ընդունարանի

նի նշանակությունը եւ կոչումների տարբերությունը: Բայց ես բացատրություն ունեմ, որ, հնարավոր է, ուղղափառների առաջնորդը կհաճի լսել՝ ինձ դատապարտելուց առաջ»: Եվ ես նրան պատմեցի, թե ինչ է եղել այն ժամանակ, երբ ես թաքնվել էի քո տանը: Այնժամ խալիֆն ասաց. «Այս անգամ քեզ ներում եմ, բայց այլեւս դա չկրկնվի»: Եվ ես դուրս եկա: Դրանից հետո Ուբայդալլահն ինձ ասաց. «Աթու Աթալլահ, այժմ ես քեզ հայտնի մարդ դարձրի, այնպես որ, եթե դու պատրաստի հազար դինար չունես նեղ օրվա համար, կկործանվես: Պետք է քեզ օժտել այդ դրամով, իսկ ի լրումն դրա՝ քեզ ապահովել ունեցվածքով, որ կլինի քոնը եւ ժառանգներինդ»: Ես պատասխանեցի. «Ես քո հնազանդ ու խոնարհ ծառան եմ»: Նա կանչել տվեց գրագրին, երբ նա եկավ, հրամայեց անմիջապես հրավիրել վաճառականներին, պայմանավորվել նրանց հետ հարյուր հազար կուրըր (7.200 ռաթըլ, սրա միավորը՝ 400 գրամ) ուտեստեղենի գնի մասին, որոնք պիտի ստացվեին աս-Սավադի կառավարչից, եւ այդ մասին հայտնվեր իրեն: Գրագիրը սենյակից դուրս եկավ, որոշ ժամանակ անց վերադարձավ ու ասաց, որ ամեն ինչ կատարել է: Այնժամ վեզիրը նրան հրահանգեց այդ 100.000 կուրըրը վաճառել Աթու Աթալլահին մեկ դինարով պակաս՝ յուրաքանչյուր կուրըրին: Այդպես պայմանավորվեցին վաճառականների հետ, իսկ հետո նույն ապրանքը ծախել վաճառականներին՝ Աթու Աթալլահի անուն



նից՝ նրանց հետ պայմանավորված գնով: Դետով վաճառականներից պահանջեցին իսկույն վճարել տարբերությունը, մնացած դրամի մոծումը հետաձգել մինչեւ ապրանքի ստացվելը: Զարտուղարը նաեւ պիտի առաքեր շրջաններ՝ հրաման վաճառականներին ապրանք տրամադրելու: Աթու Աթալլահը շարունակեց. «Նրա հրամանը կատարվեց, եւ ես մի քանի ժամում 100.000 դինարի տեր դարձա՝ դրա համար բան չունենալով: Այնժամ Եփրեմ ինձ ասաց. «Թող դա լինի քո կարողության հիմքը եւ ապահովություն նեղ օրվան: Այսուհետեւ դու խնդրագրեր ընդունիր ամենքից, ով ինչ-որ բան կխնդրի քեզ, դրա դիմաց գին նշանակիր ու արի մոտս»:

Աթու Աթալլահը շարունակեց. «Ես ամեն օր խնդրագրեր էի տանում նրան, որոնցով հազարավոր

դինարներ շահեցի՝ միջնորդելով կարելու բանակցությունների եւ մասնակցելով եկամտաբեր գործարքներին, մինչեւ որ կարողությունս հասավ այժմյան չափերին: Երբեմն ինձնից խնդրագրեր ընդունելով՝ վեզիրը հարցնում էր՝ ինչքան ես խոստացել դրա դիմաց: Երբ նրան հայտնում էի գումարը, նա ասում էր. «Դա ճիշտ է, սա այսքան արժե,- նշելով մեծ գումար,- վերադարձիր եւ բարձրացրու գինը»: Ես պատասխանում էի, թե ամաչում եմ այդպես վարվելուց: Նա ասում էր. «Նրանց ասա, որ ես չեմ կատարի քո խնդրանքը, մինչեւ այնպես չվճարես, ինչպես ասում եմ, եւ որ ես ինքս եմ նշանակել այդ գինը»: Այնժամ ես վերադառնում էի խնդրատուի մոտ, նրանից պահանջում վճարի համապատասխան հավելում եւ տանում նրա համաձայնությունը»: Շարունակությունը՝ էջ 7



Հայ կնոջ կերպարը, ի տարբերություն հայ տղամարդու կերպարի, համեմատաբար հազվադեպ է երեւան գալիս օտարազգի հեղինակների երկերում: Այդուհանդերձ, այն ամենը, ինչն արդեն իսկ գրվել է հայ կնոջ մասին, կարող է միանգամայն բավարարել ծառայել մի ամբողջ ուսումնասիրության համար: Հետաքրքիր է, թե ինչպես են օտարազգի գրողները բնութագրել եւ գնահատել հայ կնոջը՝ համեմատելով նրան այլ ազգերի կանանց հետ:

Այլազգի գրողները գովերգում են հայ կանանց՝ բնատուր գեղեցկության, բարոյական մաքրության եւ անմեղության համար: Շատ հաճախ հայ կինը ներկայացվում է իբրեւ բարձրաշխարհիկ անձնավորություն, որն իր Եւրոպայի դուրսհանում է եւ կարծես շրջապատված ամոթխածության ու կուսության աուրայով: Մենք հանդիպում ենք նման մի կնոջ XIV-րդ դարի անգլիացի բանաստեղծ, անգլիական պոետիկայի հայր Ջեֆրի Չոսերի «Անելիդան եւ Արսիդան» պոեմում: Պարզվում է, որ Անելիդան իրականում հայոց թագուհի Անահիտն է: Ինչպե՞ս է անգլիացի բանաստեղծը ներկայացնում

հայոց թագուհուն. «Թագուհին երիտասարդ էր՝ քսան տարեկան, միջահասակ եւ վայելչատես: Բնավորությամբ Անելիդան լավատես էր եւ տոկոս» (տե՛ս Hamalian L., As Others See Us. The Armenian Image in Literature, Ararat Press, 1980, էջ 99): Չոսերը 357 տողով պատմում է, թե ինչպես է Արսիդը դավաճանաբար լքում հայոց թագուհուն, քանի որ ինքն ուրիշ սեր էր գտել: Թե ինչո՞ւ է Ջեֆրի Չոսերն ընտրել հայազգի կնոջը՝ որպես իր երկի հերոսուհի, ստույգ հայտնի չէ, թեեւ որոշ հետազոտողներ կարծում են, որ անգլիացի բանաստեղծի նմանօրինակ ընտրությունը պայմանավորված է հայոց արքայի 1384 թ. Անգլիա կատարած այցի հետ: Ինչեւէ, հետազոտողների մեծ մասի կարծիքով՝ Չոսերի պոեմն ավելի վաղ էր գրվել, քան հայոց թագավորի այցելությունը: Սակայն մի բան ակնհայտ է. Չոսերը Հայաստանի մասին քաջատեղյակ է եղել: Դա է վկայում հանրահայտ «Զեյթերբերյան պատմությունների» նախաբանը:

Չոսերից բացի՝ հայ կանանց կերպարին անդրադարձել է նաեւ անգլիացի գրող եւ դիվանագետ Ջեյմս Մորիերն իր «Կարսեցի օ-

Հայ կնոջ դասկերումն օտարազգի գրողների երկերում

րիորդ Աիշան» գրքում (Morier J., Ayesha the Maid of Kars. Rupert Hart, London, 1834): Վերջինիս մեջ ասվում է, թե ինչպես է անգլիացի լորդ Օսմոնդը ճանապարհորդում Արեւելյան Թուրքիայով: Երբ նա անցնում էր մի կարսեցի հայ ներկարարի տան կողքով, նա դռան մոտ կանգնած երկու կին է տեսնում: Ահա թե ինչպես է օտարերկրացին նկարագրում նրանցից մեկին. «Կանանցից մեկը բավականին բարձրահասակ էր եւ իշխանական կեցվածք ուներ: Կնոջ քողը վայր ընկավ ձեռքից, երբ Օսմոնդը կանգ առավ, որպեսզի ավելի ուշադիր նայեր նրան: Օտարերկրացու աչքի առաջ երեւան եկավ մի գարմա-նահրաշ կատարելություն: Լորդ Օսմոնդին թվաց, թե իր առջեւ կանգնած է մի աստվածային էակ» (տե՛ս Hamalian L., Նշվ. աշխ., էջ 99):

Ավելի ուշ Օսմոնդը կրկին հանդիպում է այդ հայ կնոջը, եւ ահա թե ինչպես է նա բնութագրում նրան. «Դուրիշ Աիշան իր ողջ գեղեցկությամբ, հիրավի, կուսական համեստության մարմնավորում էր» (տե՛ս Hamalian L., Նշվ. աշխ., էջ 99):

Հայ կնոջը համանման գնահատական է տվել նաեւ ռուս մեծ գրող Լեւ Տոլստոյը: Դրանում մենք համոզվում ենք նրա հանրահայտ «Պատերազմ եւ խաղաղություն» վեպի ընթերցելիս (Л. Н. Толстой, «Война и Мир», Москва, «Художественная литература», 1968): Ներկայացնելը մեկ դրվագ. «Պիեռն արագ քայլերով անցնում էր ամբոխի միջով՝ ուշադիր զննելով մարդկանց դեմքերը: Նա պատահաբար նկատեց մի վրացի կամ էլ հայ ընտանիքի: Այդ ընտանիքում կար մի գառամյալ ծերունի՝ գեղեցիկ արեւելյան դիմագծերով: Ծերունին հագին ուներ նոր, կտորով պատված ոչխարի բուրբ

եւ նոր կոշիկներ: Պիեռն նաեւ տեսավ նույն կերպ հագնված մի տարեց եւ մի երիտասարդ կնոջ: Վերջինս, ով շատ երիտասարդ էր, Պիեռնի աչքերից իր անթերի արեւելյան գեղեցկությամբ: Կինը նրբորեն ուրվագծված, աղեղնավոր, սեւ հոնքեր ուներ: Նրա դեմքն արտասովոր ճերմակ էր: Այն հիասքանչ էր, օվալաձեւ եւ անխռով արտահայտություն ուներ: ... Երիտասարդ կինն իր ճոխ սատիկն թիկնոցով եւ գլխին կապած յասամանագույն գլխաշորով ձյան մեջ նետված մի նուրբ, տարաշխարհիկ բույս էր հիշեցնում» (տե՛ս Hamalian L., Նշվ. աշխ., էջ 99-100):

Լեւ Տոլստոյը հայերի, մասնավորապես հայ կնոջ մասին գրում է «Պատերազմ եւ խաղաղություն» վեպի եւս մեկ դրվագում. «Մի ֆրանսիացի զինվոր գողանում էր հայ ծերունու կոշիկները, իսկ այդ ժամանակ մեկ այլ ֆրանսիացի զինվոր ամբարտապան քայլվածքով մոտենում է երիտասարդ հայուհուն եւ ապա ձեռքերը գրպաններից հանելով՝ բռնում է նրա պարանոցից: Երկար, խոնարհվող թարթիչներով սքանչելի կինը մնաց անշարժ եւ պահպանեց իր անվրդով կեցվածքը. կարծես ո՛չ տեսնում էր եւ ո՛չ էլ զգում, թե զինվորն իր հետ ինչ է անում» (տե՛ս Hamalian L., Նշվ. աշխ., էջ 100):

Այս փոքրիկ դրվագից ընթերցողը պատկերացում է կազմում ոչ միայն հայուհու բնատուր գեղեցկության, այլեւ նրա արեւելյան զսպվածության, հավասարակշռվածության եւ տոկունության մասին:

Հայուհիների մասին գրել է նաեւ ռուս մեծ գրող Անտոն Չեխովը: Խոսքը մասնավորապես վերաբերում է նրա ամենաքննարկյալ եւ հիշարժան պատմվածքներից մեկին, որը վերնագրված է «Գեղեցկուհիները»

(տե՛ս համացանցում authorchehov.ru/...): Վերջինիս մեջ գովերգվում է հայ կնոջ յուրահատուկ, զուսպ եւ չափազանց տպավորիչ գեղեցկությունը: Չեխովի պատկերած հայուհին մի դեռատի ու անաղարտ աղջիկ է, որը դարձել է ռուս գրողի գովերգության առարկան: Այդ տասնվեցամյա հայ աղջկան պատմվածքի շարադրողը հանդիպում է Դոնի գավառ կատարած ուղեւորության ժամանակ: Պատմվածքի հերոսն ու նրա հայրը կանգ են առնում Բախչի Սալախ կոչվող հայկական գյուղում եւ հյուրընկալվում մի հարուստ հայի տանը: Հայն այստեղ ներկայացված է գրոտեսկային ձեւով, բայց նրա պահվածքն իրոք հպարտ է, լուրջ ու արժանապատիվ: Հայորդու դուստրը՝ Մաշան, կամ ինչպես հայրն է նրան կոչում՝ Մաշյան, գրավում է հերոսի ուշադրությունն այլ պատճառով. «Երբ ես սեղան նստեցի, հայացքս ընկավ մի աղջկա դեմքի, որն ինձ մի բաժակ պարզեց: Այդ պահին ինձ մոտ այնպիսի զգացողություն առաջացավ՝ կարծես իմ հոգու միջով գեփյուռ անցավ: Այդ գեփյուռն իր հետ տարավ օրվա դժվարությունները, ճանապարհի փոշին ու ձանձրույթը: Դեռատի հայուհու դեմքը ամենագրավիչ դեմքն էր, որ ես երբեւէ տեսել էի իրական կյանքում կամ երազներս մեջ: Իմ առաջ կանգնած էր մի անթերի գեղեցկուհի, եւ ես որսացի նրա հմայքն առաջին իսկ հայացքից, ճիշտ այնպես, ինչպես կնկատեի կայծակի փայլը... Ես միակը չէի, ով այդ հայուհուն գրավիչ էր համարում: Նույնիսկ իմ պապը՝ ութսուն տարեկան մի ծերունի, որը կոշտ ու կոպիտ մարդ էր եւ ընդհանրապես անտարբեր էր գեղեցկի հանդեպ, մի ամբողջ րոպե հիացմունքով նայում էր Մաշային...»

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4

«Ընտանիքի հայրը», «Եռանկյունին» վիպակներում կերտված են սեւեռուն նվիրումի եւ հոգեբանության տեր հերոսներ: Կնոջ հավատարմության կորուստն անգամ Միսակի համար առիթ է բաժանվելու ընտանիքից: Իսկ եռանկյունի դարբնոցի հինգ դարբինների միասնական գոյությունը, որոնց բոլորի անունն էլ Սկրտիչ է, նրանց ճանաչող պատանի Հովսիպի համար դառնում է ապրելու բարոյականության նախադրյալ:

Սեւեռումի պահը, լինի զգայական թե գիտակցական, ամենաբնութագրականն է Այվազյանի համար: Այդ սեւեռման պահին էլ նա երբեմն ազատություն է տալիս իր ընկալումներին, պատկերվող վիճակը ներքաշում պայմանականության մեջ, ինչն էլ իր հերթին բերում է կյանքի ընկալման մի նոր տեսանկյուն:

Ոգեւորության ու ներշնչանքի մի սեւեռուն վիճակի մեջ է իրեն դրսեւորում «Փառահամար» պատմվածքի ձեռնածուն: Նա հրաշքներ է գործում, եւ կյանքը զարմանք է թվում նրան: Կրկե-

սային հերթական աճապարարության ժամանակ նա այն զգացողությունն է ունենում, որ կյանքը հրաշք է, եւ անհնարին ոչինչ չկա: Պատրանքով ապրելու պահն է ներկայացնում հեղինակը, հերոսին կտրում իրերի առկա վիճակից եւ զգում մի այնպիսի դրության մեջ, երբ կարող են նրա բոլոր ներքին ցանկություններն առարկայանալ եւ շրջապատել իրեն:

Այսպիսի պայմանական մի վիճակ ստեղծված է նաեւ «Հեքիաթ» պատմվածքում, ուր որպես իրականություն՝ ներկայացվում է այնպիսի մի դրություն, որը գործում է հերոսի երագի մեջ եւ նրա երեւակայության ստեղծածն է: Այդպիսին է նաեւ «Փախուստը», որի մեջ դարձյալ երեւակայության ստեղծածը հերոսին իրականություն է թվում: Երեւակայության սեւեռման պահին նրան թվացել է, թե խանդի առիթով ինքը սպանություններ է գործել, այնինչ՝ այդ ամենը դարձյալ մտքում կատարված գործողություն է:

Որոշ չափով անսովոր է նաեւ «Թիֆլիսի ցուցանակները»

պատմվածքի հերոսի՝ Գրիգորի վիճակը: Նա անչափ բաց ու անկեղծ մարդ է, եւ նրան թվում է, թե դա է մարդու բնական ձեւը: Գրիգորը ցանկանում է ոչ միայն ինքն իր մեջ լինել այն, ինչ կա իրականում, այլ այդպես իրեն ներկայանալ հանրությանը, իրեն խորթ դիմակներ չկրել, չձաճածել լինելության սեփական կերպը: Գրիգորի այս խառնվածքն անչափ բնական է ու ճիշտ, բայց եւ անսովոր, որովհետեւ միայն նա է այդպես: Գրիգորի անկեղծությունը չերմացնում էր մարդկանց, իսկ երբ նա մեկուսանում է հանրային կյանքից, մարդկանց վրա իջնում է անտարբեր ու սառը մի գորշություն, եւ մարդիկ կարծես օտարանում են իրարից: Նրանց պակասում է Գրիգորի անկեղծությունը:

Մարդկային սուր ու սեւեռուն կրքերի եւ զգայությունների շարժիչ ուժը բնութագրական է ոչ միայն Այվազյանի պատմվածքներից ու նորավեպերից շատերին («Բուլբուլ», «Զիլիսի», «Ձիերին հատկացված ճանապարհը» եւ այլն), այլեւ «Աղի Կոմսը», «Արմիստ», «Ուստի» գառ» վիպակներին, որոնցում նա արձարծում



է տոհմի, ցեղի պահպանման հարցեր:

Բազմաթիվ պատմվածքներում («Ավետարան ըստ Հավլաբարի», «Սուրբ ճշմարտություն», «Դարդ-աղյուսը», «Ոչ ոք չգիտի Հյուսիսի մասին», «Մեր տիրությունը Կեօյի շուրջ», ինչպես նաեւ «Թիֆլիսյան» շարքի գործերը) Այվազյանն ստեղծում է մարդկանց հարազատացնող մի շերտ ընտանական մթնոլորտ եւ որոնում հոգեւոր եղբայրության եզրեր: Այվազյանի համար կարեւորը ոչ թե դեպքերի նկարագրությունն է, այլ զգայական-զգացմունքային ապրումների շուրջ համախմբվող խոհը, մտքի ներթափանցումները: Այդ հատկանիշները նրա արձակին հաղոր-

դում են քնարափիլիսոփայական բնույթ եւ նրա մտածողությունն օժտում առանձնահատուկ ոճական երանգներով: Քնարափիլիսոփայական արձակը Նյութի գեղարվեստական բացահայտման սկզբունքներով ըստ ամենայնի առանձնանում է վիպական կամ պատմողական արձակից: Ա. Այվազյանից բացի՝ ժամանակակից հայ արձակում քնարափիլիսոփայական շուկնը բնորոշ է նաեւ Ռ. Արամյանի պատմվածքներին («Ով գարմանալի», 1969), որոնց ներքին ազդակը դարձյալ զգացմունքային լիցքն է ու խոհը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԻՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ՏԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ «ԿՏՐԻՃՎՈՐԱՅ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ» ԻԲՐԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սկիզբը՝ էջ 3

Վերոհիշյալ երիտասարդական շարժումները Փոքր Ասիայում մոնղոլների տիրապետության շրջանում հանդես են եկել «ախիակալ» կազմակերպությունների տեսքով, սակայն՝ նպատակների ու օրենքների նույնությամբ: «Ախի» նշանակում է եղբայր, սակայն կա մեկ այլ տեսակետ, ըստ որի՝ «ախիականությունը» գալիս է թուրքերեն «աքի» բառից, որը թարգմանվում է վեհանձն, առատածեռն եւ հոմանիշն է «Ֆր-թուր»-ի (*Նույն տեղում, էջ 162*): «Ախիական» կազմակերպությունների մասին կարելու տեղեկություններ է տալիս 14-րդ դարի արաբ նշանավոր ճանապարհորդ Իբն-ի Բատուտան: Նա, 1332 թ. ճանապարհորդելով Փոքր Ասիայում, հյուրընկալվել էր «ախիների» կողմից եւ շփվել հատկապես Երզնկայի «ախիների» հետ՝ ուշագրավ տեղեկություններ հաղորդելով նրանց դավանած գաղափարների, խնջույքների, պարտավորությունների մասին: Ստորեւ բերում ենք մի հատված, որ թարգմանել է հրատարակել է Զրաշյա Աճառյանը. «Արաբներն հրատարակության 260-265 էջերում հեղինակը խոսում է Ալ-ախիյաթ ալ-ֆիթիան «Երիտասարդների եղբայրություն» միության մասին: Այս միությունը տարածված է ամբողջ Փոքր Ասիայում, ամեն քաղաք, ամեն գյուղ, ուր որ թուրքմեն կա: Միության անդամները կոչվում են ալ-ախի (եղբայր) կամ ֆաթա (երիտասարդ):

ապրում են համայնական կյանքով, իրար հետ միասին. ամուրի են: Նրանք ընտրում են մի գլխավոր՝ իրենց արիեստակիցներից. Նա շինում է մի վանք, գարդարում գորգերով ու կարասիքով. անդամները աշխատում են ամբողջ օրը եւ իրենց ամբողջ շահածը բերում, հանձնում են իրենց գլխավորին... Արդարության պաշտպան, անիրավության հակառակորդ եւ չափազանց հյուրասեր են: Եթե պատահի մի հյուր, մի պանդուխտ կամ մի ճանապարհորդ, պահում են իրենց մոտ եւ նրա բոլոր պետքերը հոգում: Իրենց հասարակաց ճաշից հետո երգում ու պարում են: Ունեն առանձին տարածք եւ կրում են մի տեսակ բարձր գլխարկ...» (*Օտար աղբյուրները հայերի մասին, Արաբական աղբյուրներ, 2, Իբն-ի Բատուտա, Զառեց եւ թարգմանեց Զ. Աճառյանը, Եր., 1940, էջ 40-41*):

Ըստ պարսկական աղբյուրների՝ «ախիականությունը» Պարսկաստանից է անցել Փոքր Ասիա (*տե՛ս Ս. Պարսումյան-Տատոյեան, Զայ-արաբական..., էջ 161*):

Կարելու է նշել մի հանգամանք, որ խեղճերին օգնելուց, բռնության դեմ պայքարելուց զատ՝ «ախիները» ունեցել են նաեւ գրական բարձր ճաշակ: Նրանք խնջույքների ժամանակ ունկնդրել են իրենց համակիր բանաստեղծ-գուսանների հոգեգմայլ երգերը եւ վայելել բանաստեղծության մեջ արտահայտված սիրո, կարոտի ու հերոսության բերկրանքը:



Զայտնի Է, որ «ախիների» հետ ամուր կապեր է ունեցել պարսիկ մեծ բանաստեղծ Նիզամին եւ նրանց կողմից «վայելած է մեծ յարգանք Փոքր Ասիոյ Ախիներու կողմէ, իբրեւ տեսակ մը սուրբ» (*Նույն տեղում, էջ 162*):

Նա պալատական երգիչ չի դարձել, իր քնարը ծառայեցրել է հասարակ ժողովրդի շահերին եւ դարձել նրա սիրելին: Նիզամին երգել է սերն ու ազնվությունը, արդարությունն ու քաջությունը, ցանկացել դրանք սերմանել մարդկանց մեջ: Նա դեռ երիտասարդ հասակում գրել է չքնաղ գազելներ, որոնք աչքի են ընկնում լեզվի ճոխությամբ, նուրբ պատկերներով եւ բանաստեղծական արվեստի կատարելությամբ: Ահա դրանցից մեկը (*Էդ. Աղայան, Նիզամի Գյանջելի, Եր., 1948, էջ 77*).

*Սիրահարներին, որպես
առյուծներ, նա թուխ աչքերով
որսում է էլի,
Եվ ով առյուծի սիրտ ունի սիրող,
գրկում է սրտից, յարից սիրելի,
Հոնքերի նետը աղեղին դնում,
լարում է, ձգում, բայց
չի արձակում,
Օ, հրաշք, նայիր, նա ինձ
խոցում է, թեւէ չի նետում
նետերը ձեռի:*

*Եսօր Սանամիս երեսը տեսա,
վշտից շապիկս ես ծվատեցի,
Ինչու աշխարհում չփորձված
գինին գինովցնում է ինձ
սքանչելի:*

*Երբ քո երկաթե սրտում
փնտրում եմ հավատարմություն,
նվիրվածություն,
Ոնց կազդեմ բյուրեղ իմ սրտի
վրա պարսաքարերը սիրո,
պաշտելի...*

*Թեւէ յարի հետ հանդիպելը
շատ նեղիչ է, ճնշող, երգիչ
Նիզամի,*

*Բայց ով վարդեր է կյանքում
որոնում, նա հանդիպում է
նաեւ փշերի:*
«Ախիները» գինու ընկերակցությամբ լսում էին բանաստեղծին, եւ նրանց երիտասարդ հոգիները վառվում էին սիրով, ինչպես հայոց կտրիճների սրտերն էին պնդում Երզնկացիների, Զովհաննես Թլկուրանցու, Նահապետ Զուչակի երգերից:

Ինչպես տեսնում ենք, միջնադարյան Զայաստանում կազմակերպված երիտասարդական միությունները նմանություններ ունեն փոքրասիական այլ երկրների նույնատիպ կազմակերպությունների հետ: Դրանք կազմակերպվում էին այն ժամանակ, երբ թուլանում էին պետության հիմքերը, երբ օտար նվաճողների վտանգն էր սպառնում:

Զայկական քաղաքներում ստեղծված «Կտրիճկորաց միությունները» երկրի համար օրհասական պահերին ռազմական միավորումներ էին դառնում եւ պաշտպան կանգնում հարազատ ժողովրդին: Այս կազմակերպությունները հաճախ գործել են Եկեղեցու հովանու ներքո, եւ Երզնկայի «Եղբայրության» օրինակով դրանց համար կանոններ են գրել բարձրաստիճան հոգեւորականները: Այս հանգամանքը շատերին զգել է թյուրիմացության մեջ՝ ենթադրել տալով, թե «Եղբայրները» կրոնավորներ են եղել:

Ճշմարտությունն այն է, որ երբ Զայաստանում վտանգված են եղել պետականության հիմքերը, ժողովրդին առաջնորդել է Եկեղեցին՝ կաթողիկոսի գլխավորությամբ: Եվ քանակն է, որ Եկեղեցին, բացի կրոնական կյանքից, նաեւ աշխարհիկ հարցերի կարգավորմամբ էր զբաղվում:

*Վարդան ԵՂԱՍՏՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու,
դոցենտ*



Սկիզբը՝ էջ 5



Ահա թե ինչ պատմեց հայրս (ալլաիք նրանից գոհ լինի) դադի Աբու Ումարի խոսքերից.

«Ղադի Իսմայիլի հետ էի, երբ նա Ուբայդալլահ իբն Սուլայմանին ինչ-որ դիմումներ էր հանձնում, որոնք սա կնքում էր: Այն ժամանակ Իսմայիլը նրան տվեց եւս մի դիմում, բայց վախենալով, որ կանհանգստացնի վեզիրին՝ ասաց. «Եթե դժվար չէ վեզիրի համար»: Վեզիրը դրեց կնիքը նաեւ այդ դիմումին: Այնժամ դադին տվեց եւս մեկը՝ ասելով. «Եթե վեզիրին հարմար է դա անել»: Վեզիրը դարձյալ կնիք դրեց: Բայց երբ Ղադին նույնպիսի արտահայտությամբ տվեց եւս մեկը, Ուբայդալլահը նրան ասաց. «Ա-

բու Իսհակ, ինչքա՞ն պիտի ասես. «Եթե կարող է, եթե հարմար է, եթե դժվար չէ եւ այլև»: Ով որ քեզ կասի, թե ինքը նստում է այստեղ եւ գոնե մեկ անգամ կիրաժարվի ինչ-որ բան անել, ստախոս է: Միանգամից բեր բոլոր խնդրագրերը»: Այնժամ Իսմայիլն իր թեւքից հանեց թղթերի ամբողջ մի տրցակ եւ փռեց վեզիրի առջեւ, իսկ նա կնքեց բոլոր թղթերը. ամբողջը՝ մոտ ութսուն խնդրագիր»:

Աբու-լ-Աբբաս Զիթաբ Ալլահ իբն Մուհամմադ իբն ալ-Մուհաջջիմն ինձ պատմեց իր նախնիներից ինչ-որ մեկի խոսքերից, որ ալ-Մամունն ազատել է Ամըր իբն Նախեափի առնով կառավարչին՝ Մուս իբն Աբի-լ-Ֆարաջ իբն ադ Ղախխաքի փեսային, աս-Սավադի հարուստ բնակչին: Հետո նա հրամայել է Մուհամ-

ԱԹ-ԹԱՆԱՀԻ

մադ իբն Եագադին՝ բանտարկել նրան ու տանջել, մինչեւ որ նրանից կկորզի պարտավորություն՝ վճարելու տասը միլիոն դրոհեմ, որ պետք էր նրանից գանձել: Ամըրը հանձնվեց Մուհամմադին, իսկ սա նրա հետ հարգանքով ու սիրալիք էր վարվում, հրամայել էր կատարել նրա բոլոր ցանկությունները եւ տալ անհրաժեշտ ամեն բան: Ամըրն իր տանը նրան տրամադրեց ճոխ կահավորված ծածուկ սենյակ, սպասարկելու տվեց ճորտեր ու ծառայություն, արեց ամեն բան, որ վայել է նրա կոչումն ունեցող մարդուն: Երեք օր նա գրուցեց իր գերիի հետ:

Իսկ ալ-Մամունը հարցրեց՝ ինչպես են գործերը, եւ իմանալով՝ ինչ պերճանքով են շրջապատել Ամըրին՝ խիստ զայրացավ, թեպետ իրեն ասել էին, որ Ամըրից դրամ պահանջում են: Հորորորդ օրն Ամըրը Մուհամմադին մարդ ուղարկեց, որը պատմեց այսպես. «Նա ասաց. «Բարեկամս, ես գիտեմ, թե խալիֆը քեզ ինչ է հրամայել անելու ինձ, բայց երդվում եմ ալլահով, ես երբեք այդքան դրամ չեմ տեսել, նույնիսկ՝ կեսը կամ մեկ երրորդը, եւ իմ ամբողջ կարողությունն այդքան չարժե: Հավանաբար խալիֆն այդ ամենն անում է՝

ցանկանալով իմ մահը: Բայց դու իմ նկատմամբ այնպիսի բարություն ցուցաբերեցիր, որ ես պարտավոր եմ ամեն ինչ անել՝ քո տիրոջ առջեւ քեզ արդարացնելու համար: Ուստի կազմել եմ իմ ամբողջ առկա եւ թաքուն ունեցվածքի ցանկը. ահավասիկ»: Եվ նա ինձ հանձնեց այդ ցանկը. այդտեղ կար ընդամենը երեք միլիոն դրոհեմի ունեցվածք: Հետո նա երդվեց բաժանումով, իբր ճորտերին ազատագրելով եւ այլ սարսափելի երդումներով, թե իրեն պահել էր միայն հագուստը, որ կրում էր իր վրա: «Սա է ամբողջը, որ կարող եմ,- ասաց նա,- ավելին անել չեմ կարող: Վերցրու սա, եթե հնարավոր ես համարում, եւ խալիֆին խնդրիր բավարարվել դրանով: Եթե նա կհամաձայնի, դա կնշանակի, որ ալլահը ինձ փրկեց քո ձեռքով եւ ազատեց ինձ մահացու վտանգից: Իսկ եթե հրաժարվի, դա կնշանակի, որ նա ինձ կհանձնի իմ թշնամի ալ-Ֆադլը իբն Մարվանին, որ ինձ համար հավասար է մահվան: Բայց, երդվում եմ ալլահով, այդ դեպքում ես ոչ մի դրոհեմ չեմ վճարի եւ չեմ նմանվի նրանց, որոնցից նվաստացումով կարելի է կորզել ավելին, քան հարգալից

վերաբերմունքով: Ո՛չ, կմահանամ՝ խալիֆին չտալով իմ ունեցվածքից ոչ մի դուրուշ: Բայց ցանկացած պայմանով ես քեզ շնորհապարտ եմ, եւ եթե ողջ մնամ, կարող եմ դա ապացուցել, իսկ եթե մահանամ, քեզ կհատուցի ալլահը: Ես վերցրի նրա ցուցակը եւ գնացի ալ-Մամունի մոտ: Նա ինձ հարցրեց՝ ինչի հաջողվեց հասնել Ամըր իբն Նահիափի գործով: Ես պատասխանեցի, որ նա ինձ առաջարկել է երկու միլիոն դրոհեմ եւ որ դրանից ավելի նա ոչինչ չունի: Ալ-Մամունը զայրույթից կարմրատակեց ու ասաց. «Ես հրաժարվում եմ նրանից վերցնել այդ երկու միլիոնը, ինչպես եւ՝ չորս կամ ութ միլիոն»: Այնժամ ալ-Ֆադլը ինձ ասաց. «Դու նրան պատվավոր տեղ ես նստեցրել, շրջապատել ես հոգատարությամբ ու հարգանքով, ինքը սպասարկել ես նրան ու նրան տվել ես քո ծառաները.- ուրեմն ինչո՞ւ նա չիրաժարվի վճարումից»: Ես պատասխանեցի. «Այդ դեպքում ինքը զբաղվիր նրանով, եթե կուզես»: Եվ խալիֆը նրան հանձնարարեց զբաղվել այդ գործով:

*Շարունակելի
Ռուսերենից թարգմանեց
Արշակ ՄԱՂՈՅԱՆԸ*

ՈՎԲԵՐ ԵՆ ՔՐԻՍՏՈՆԻ ՆԱԽԱՆՁԱՅՈՒՅՑ ԴԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 5

Իմ դիտարկումները ցույց են տալիս, որ այն, ինչ մինչև այժմ հետազոտողները ընդունում են իբրեւ արձանագրության հիմնական բնագիր եւ իրավամբ համարում Յովհան Օձնեցու խմբագրություն (8-րդ դարի առաջին քառորդ), ավելի ուշ շրջանի է պատկանում, մինչդեռ Յայոց Կանոնագրի ծանոթագրության մեջ գետնադրված «Նախադրութիւն» կոչված խմբագրությունը ներկայացնում է հնագույն եւ անհամեմատ ավելի հարազատ բնագիրը:

Յնագույն Նախադրության մեջ ժողովի մասնակից եպիսկոպոսների եւ երեցների անվանց համեմատումը եղիշեի եւ Ղ. Փարպեցու երկերում հիշված Արտաշատի ժողովի ցուցակների հետ թույլ է տալիս ճշգրտել մի շարք անձնանուններ, որոնք աղավաղված են Շահապիվանի ժողովի Նախադրության մեջ (տե՛ս Աբել Մխիթարեանց, էջ 57-60: Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 519. Յայապատում, էջ 159-160): Ահա հետաքրքրող հատվածը. «Եւ գային ժողովէին ի հրամանէ միաբանութեան յեղեալ կէտն ի Շահապիվանի բանակետոյ թագաւորացն Յայոց ի ժամն նորաբեր տաւին. եւ լինէր այս ի ԻՉ ամի թագաւորութեանն Յագկերտի (այլ ձեռագրերում՝ «ի Ե ամի թագաւորութեանն Յագկերտի Պարսից արքայի» - (Կանոնագիրը Յայոց, հտ.Ա, էջ 427) Պարսից արքայի, եւ Վասակայ Սիւնոյ մարզպանին Յայոց, եւ Վահանայ Ամատունոյ հազարապետի, եւ Վրուայ Խոռխոռունոյ մաղխ[ա]զի: Եւ գային ժողովէին եպիսկոպոսք Ի եւ երիցունք բազումք, սարկաւազք եւ նախանձայրոյզ պաշտանեալք (այլ ձեռագրերում՝ «Եւ ժողովէին եպիսկոպոսք Ի եւ երիցունք եւ սարկաւազունք բազումք եւ նախանձայրոյզ եւ անհամեմատ ավելի հարազատ բնագիրը» - (Կանոնագիրը Յայոց, հտ. Ա, էջ 427-428): Քրիստոսի եւ համարեն ուխտը եկեղեցւոյ... Նախարարք ամենայն առաջի Վասակայ մարզպանի եւ Վահանայ հազարապետի եւ Վրուայ մաղխ[ա]զի եւ առաջի գլխաւոր եպիսկոպոսաց Ղաղա, Տաճատա, Արտակա, Գաղա, Եփրեմի եւ այլոց բազմաց երիցանց գլխաւորաց՝ Յովսէփայ (Յովսէփայ), Յովհաննայ, Մեղտայ, Երեմիայի, Ասպուրակայ, Դանիէլի, Դեռնտի սրբոյ, Եղիշէի դրան երիցու եւ այլոց սրբասէր քահանայից, որք էին Նախանձախնդիր արինացն առաջի աւագ Նախարարացն՝ քաջին եւ կորովոյն Վարդանայ Մամիկոնեանոյ եւ Արշալոյս (Արշուրայ) Կամսարականի եւ Մանաճիկ[ոյ]ի Ռշտունոյ սպարապետին Յայոց, Չըկա Դիմաքսեւի եւ այլոց Նախարարաց: Որք միաբանեալք էին եւ հաւանեալք արդար արինաց եւ քրիստոսական պաշտամանն եւ միաբան բարբառէին այսպէս, եթէ «Չեղեալ գկարզն սրբոյն Գրիգորի եւ զՆերսէսի եւ զՍահակայ եւ զՄաշդոցի դուք այդքէն հաստատեցէր եւ այլ եւս լաւ որպէս ձեր կամք են եւ մեք ախորժելով յանձին ունիմք, զի կարգք եկեղեցւոյ թուլացան եւ մարդիկ յանարեւութիւն դարձան: Արդ՝ որ արեւնք Աստուծոյ հաճոյ են եւ եկեղեցւոյ, դուք գայն կարգեցէր եւ մեք հնազանդիմք. եւ եթէ ոք հաստատուն ոչ պահէ գկարզս արինացն եպիսկոպոս կամ երեց կամ ազատ կամ շինական՝ պատուհասեսցի եւ տուգանս տացէ»: Եւ գայս ասացեալ քահանայապետիցն եթէ «Առաքե-

լական եւ Նիկիական հաստատեալ կացցէ, որպէս եւ են իսկ եւ մեք հնազանդ ենք, բայց որ ինչ պիտոյ է ի լրութիւնս ի նոյն կանոնս եւ մանաւանդ ի մէջ տանս Թորգոմայ հաստատեսցի»: Ապա կարգեցին եւ եղին այսպէս» (Կանոնագիրը Յայոց, հտ. Ա, ծանոթ., էջ 628. հմմտ. ՄՄ ձեռագիր № 659, թերթ 233բ - 236ա):

Նախադրության մեջ պահպանված մի շարք անձնանուններ, Ալիկանի կարծիքով, մուծված են հետագայում եւ կապ չունեն սկզբնական արձանագրության հետ. «K եւ L օրինակներում մեջ պահուած այն հատուածը, ուր ժողովի մասնակից եպիսկոպոսներու, երեցներու եւ իշխանաց անունները կը յիշուին, որ եւ է հաւատք չի ներշնչէր հարազատ, սկզբնագրին մաս համարելու (այս հոգեւոր եւ աշխարհիկ անձանց անունները Ալիկանին այնքան կասկածելի են թվում, որ իր ուսումնասիրության մեջ, գետնադրելով «Նախադրութեան» ամբողջական բնագիրը (էջ 142-145), նրանում հիշատակված բոլոր անձնանունները անխտիր առանձնացնում է շարադրանքից եւ իջեցնում էջատակի ծանոթագրության մեջ (էջ 144-145): Յոս աւագ Նախարարներ կը յիշուին. Վարդան Մամիկոնեան, «քաջն եւ կորովին», Արշալոյս Կամսարական, Մանաճիկի Ռշտունի «սպարապետ Յայոց», Չիկ Դիմաքսեան: Առաջին երկուքը ծանօթ են Վարդանաց պատերազմին. Ղազար Փարպեցւոյ քով Վարդան կը ներկայանայ Մամիկոնեից տէր եւ Սպարապետ: Միւս երկուքը անծանօթ են» (Ն. Ալիկեան, թիւ 4-12, էջ 90): Ըստ այսմ, Ն. Ալիկեանին անհայտ են մնացել Մանաճիկի Ռշտունին եւ Չիկ Դիմաքսեանը: Առաջինի մասին մանրամասն խոսք կլինի



ստորեւ: Գալով Չիկ Դիմաքսեանին՝ հարկ է նշել, որ նման անձնանուն ծանօթ չէ հավասարապէս Եղիշէին եւ Փարպեցուն, ինչպէս եւ նրանցից օգտված հետագա հեղինակներին: Ուստի թվում է, թէ Նախադրության ձեռագրերում սեռական հոլովով վկայված «Չըկա» ընթերցվածն աղավաղված է եւ պետք է ուղղել (Գա)գրկայ, որի տակ պետք է ենթադրել Խաղխաղի եւ Ավարայրի ճակատամարտերի մասնակից Գագրիկ Դիմաքսեանին (Եղիշէի Վասն Վարդանայ եւ Յայոց պատերազմին, Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Միսսեսեան, Երեւան, 1957, էջ 76, 100):

Ինչպէս երեւում է Նախադրութեան մեջ, Վարդան Մամիկոնյանը Շահապիվանի ժողովին ներկա է եղել ոչ իբրեւ Յայոց սպարապետ, այլ ավագ Նախարար, մինչդեռ Յայոց սպարապետ է հիշատակված Մանաճիկի Ռշտունին: Այս հանգամանքը բացատրելու համար է, որ Նախադրության խմբագրողը՝ հավանորեն Յովհան Օձնեցին, Ը. դարի առաջին քառորդում իր կողմից հավելում է. «...մանաւանդ զի ոչ էր ի ժամանակին յայնմիկ իշխանութիւն ի ձեռն Նախանձայրոյզ ազգին Մամիկոնեից... Զանգի չարահնար

Շարունակելի
Ալեքսան ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

Հայ կնո՞ւք դասկերումն օտարազգի գրողների երկերում

Սկիզբը՝ էջ 6

Ցանկացած նկարիչ երիտասարդ հայտնի գեղեցկությունը կանվաներ դասական եւ անպաճույճ: Դա ճիշտ այնպիսի գեղեցկություն էր, որն ստիպում է քեզ մտածել, թե դու նայում ես ինչ-որ կատարելության: Աղջկա վարսերը, աչքերը, քիթը, բերանը, պարանոցը, կուրծքը եւ երիտասարդ մարմնի բոլոր շարժումները միավորված էին մեկ անթերի ու ներդաշնակ ակորդի մեջ, որում բնությունը եւ ոչ մի սխալ թույլ չէր տվել» (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 100-101):

Մաշան թելը մատուցելուց հետո անհետանում է գորշ խոհանոցում, որտեղից գալիս էր խորոված գառան մսի հոտը եւ հայերի ջղային ձայները: Ուշագրավ է, որ հայուհու գեղեցկությունը նկարագրողի մոտ զգայական ցանկություն չի առաջացնում, ավելին՝ այն չի առաջացնում կնոջը տիրելու եւ բերկրանքի զգացումներ: Յերոսիմ տոգորում է խորին եւ միեւնոյն ժամանակ քաղցր տխրություն, որի պատճառն այն իրողության գիտակցումն էր, որ հայուհու արտասովոր արտաքինը մի օր կթոշին: Չէ՛ որ ամեն լավ բան այս երկրի վրա անցողիկ է: Ահա այսպիսին է Չեխովի հերոսի վերաբերմունքը գեղեցիկի հանդեպ:

Յայ կնոջ մասին է գրել Նաեմ ֆրանսիացի վիպասան Պիեռ Լոտին՝ իր «Ազիադե» վեպում (Loti P., Constantinople. Cal-



Գործ՝ Ռ. Էլիբեկյանի

man Levy, Paris, 1879): Այս գիրքը, ի դեպ, 1879 թ. թարգմանվել է անգլերեն «Կոստանդնուպոլիս» անվան ներքո: Վեպի գլխավոր հերոսի Նախատիպը հենց ինքը՝ Պիեռ Լոտին է, սակայն գրքում նա ինքն իրեն ներկայացրել է որպես անգլիացի ծովային սպա: Այսպիսով՝ վեպի հերոսը 1876 թ. միջազգային շրջափակման ժամանակ

հայտնվել էր Կոստանդնուպոլսում: Այստեղ անգլիացին սիրահարվում է գրավիչ եւ երկնային գեղեցկության տեր մի սուրկուհու, որի անունն էր Ազիադե: Ի դեպ, կինն ամուսնացած էր մի թուրք պարոնի հետ: Ինչեւէ, նշված հանգամանքը բնավ չի խանգարում անգլիացուն ռոմանտիկ հարաբերությունների մեջ մտնել Ազիադեի հետ: Լոտին կնոջ համար մի բնական է գտնում քաղաքի թուրքական թաղամասի կենտրոնական հատվածում: Այնուհետեւ նա կատարյալ թուրքի կերպարանք է ընդունում եւ յուրացնում թուրքական ապրելակերպը: Այսպիսով սկսվում է մի իսկական հովվերգություն: Լոտին գնալով ավելի ու ավելի է սիրահարվում Ազիադեին, սակայն նա չի կարողանում իր մեջ քաջություն գտնել, որպեսզի կտրվեր Նախկին ղեկավար կյանքից եւ մնացյալը շարունակեր Ազիադեի հետ: Ազիադեն զգուշացնում է Լոտիին, որ ինքը կմահանա, եթե նա լքի իրեն: Ազիադեի հոռետեսական կանխատեսումն իրականություն է դառնում:

Անկարող լինելով դիմանալու իր երազանքների աշխարհի կորստին՝ Լոտին վերադառնում է եւ տեղեկանում Ազիադեի մահվան մասին, իմանում, որ իր լավ ընկեր Ահմեդը գոհվել է ռազմաճակատում: Լոտիի ճակատագիրը նույնպես ողբերգական է. նա սպանվում է Կարսի ճակատա-

մարտում: Հավելենք, որ նրա մահն ընդամենը ստեղծագործական հնարք է եւ ոչ թե իրականություն:

Տասը տարի անց Լոտին գրում է գրքի շարունակությունը եւ այն վերնագրում «Տեսիլք արեւելից» (Loti P., A Phantom from the East. Calman Levy, Paris, 1891): Այս նոր գրքի սյուժեի նյութը հիմնված է «Ազիադեի» վերջին գլուխների վերամշակման վրա: «Տեսիլք արեւելից» գրքում Լոտին կրկին ողջ է եւ շարունակում է փնտրել իր սիրած էակին: Նա հանդիպում է Անակտար-Շիրազ անունով մի տարեց հայ կնոջ, որը նրան ուղեկցում է դեպի Ազիադեի վերջին հանգրվանը:

Շարունակելի
Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լուսավորական երկշաբաթաթերթ
Զիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Զրատարակիչ՝
«Քրիստոնյա Յայաստան»
թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ. փոստ՝ gh@etchmiadzin.am
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր.
16.8.2013 թ.
Տպագրանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ